№ 3 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 5

1907

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 5 № 3

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., յունվար և փետրվար ամիսներինը միասին՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ !!

Արդէն կըհրատարակված են ընտրողների ցուցակները Պետական Դումայի համար: Ամեն մի անձն, ով ընտրութեան իրաւունք և ցենզ ունի, պէտք է հետաքրքիր լինէ իմանալու համար, արդեօք մտցրված է իր անունը ցուցակների մէջ և եթէ չէ մտցրած, աշխատէ ուղղել տալ սխալը և մտցնել տալ իր անունը, որ չը զրկվի ձայն տալու իրաւունքից պատւիրակների ընտրութեան ժամանակ: Միայն մինչև յունվարի 8-ը ժամանակամիջոց է տրվում յայտարարութիւն տալու համար, որ սխալն ուղղեն: առ. օ. մ. 10—10

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Բազմամեայ ընկերութիւն, որ զբաղվում է կեանքի դժբախտ դէպքերի ապահովագրութեամբ

Եկամուտների եւ դրամագլուխների ապահովագրութեան

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնված 1835 թուին

Ընդունում է ապահովագրութիւններ ամենազանազանակերպ պայմաններով և դրութիւններով, անչափ գումարներից մինչև 200,000 ր. մի անձի վրա: Ապահովագրողների մասնակցութիւն ընկերութեան գործերում և եկամուտներում, ապահովագրական վկայականների պայմանաժամի յարատևութիւն: Ապահովագրական գումարների վճարում, ինքնասպանութեան դէպքում: Ճանապարհորդութիւնների անսահմանափակ իրաւունք: Ապահովագրութեան դադարեցման, գրաւ դնելու և աւարտման ժամանակ ամենաշահաւէտ պայմաններ:

Պահեստի և այլ դրամագլուխներ 38,000,000 ռուբլու

Մանրամասն տեղեկութիւններ, ընկերութեան կանոնադրութիւնները և հաշիւները, ինչպէս և ընդունելութեան ցուցակները, յայտարարութիւնները և այլն, կարելի է ստանալ ձրի ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Тифлисъ. Барятинская ул., № 6, телефонъ № 415:

6—10 առ. (կ) Գլխաւոր ներկայացուցիչ՝ Բ. Գ. Կրասնեանսկի

ԲԱՑՎԱԾ Է ՆԱՂԴ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթ

Տարեկան գինն է՝ Թիֆլիսում		4 ր.	Ուրիշ տեղեր՝		5 ր.:
Կէս տարվայ	»	»	2 ր.	»	»	2 ր. 50 կ.
3 ամսվայ	»	»	1 ր.	»	»	1 ր. 25 կ.
1 ամսվայ	»	»	— 40 կ.	»	»	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թւին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունատիպ ՏԱԽՏԱԿ-ՕՐԱՑՈՅՑ, 2) միջադիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջադիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրօպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ:

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. հ.) առ. 16—20

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

„ՄՈՒՐՃ"

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ.: Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական (3 ֆ.)

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.), երկրորդ վճարը լինում մայիսին: Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 ռուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախան. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գօլովինսկի պրօսպ. Թատր. դիմաց):

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

1907 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտեմբերի 15-ը, վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան ձրիաբար նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ր., 1/2 եր. 5 ր., 1/4 եր. 2 ր., տողատեղ (կօրպուս)—40 կ.:

Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

առ. 9—10

ՄԱՍՆԱԳԷՏ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.:

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍԳԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. եւ. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիւանդով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԵ.—Կանացի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.:

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՅՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.:

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐՍԿԻ } Կլինիքական անալիզ
Բժ. Կ. Ի. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ }

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեկտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՅԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԽԱ. ԳԱԻԼՕՅԻՆ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ստնտուների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան:

առ. (ա. օ.) 38—144

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, յունվարի 8-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ բենեֆիսին

կը ներկայացնէ

ԱՐՇԻԿ

Դրամա 5 արար., Էդ. Ռոստանի թարգմ. Գ. Յ. Տէր-Գրիգորեանի

Մասնակցում է ամբողջ խումբը

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին է

Տեղերի գները բենեֆիսային են.

Վարչութեան հերթապահ անդամ՝ Գ. Յուրինեան

Ռեժիսոր Յ. Աբէլեան

առ. 2—2

Այսօր, ճրագալոյցի երեկոյեանից սկսած Նոր-Աշենի Սուրբ Աստուածածին եկեղեցում

Պատարագներին կերգէ նոյն եկեղեցու ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՔԱՌԱՁԱՅՆ ԽՈՒՄԲԸ

Գ. Ա. Մանուկեանի ղեկավարութեամբ:

առ. 1—1

ԱՂԲԻՒՐ XXV և XVIII ՏԱՐԱԶ-ԳԵՂԱՓՆՋԻԿ

Լոյս կը տեսնեն յունվարի 20-ին:

Հրաւիրվում են աշխատակիցներն ու գործակալները փութով հաղորդել բաժանորդների հասցէն:

Շարունակվում է բաժանորդագրութիւնը. ԱՂԲԻՒՐ 3 ր. (արտասահման 5 ր.), ՏԱՐԱԶ-ԳԵՂԱՓՆՋԻԿ 3 ր. (արտասահման 5 ր.)

Աղբիւր և Տարազ-գեղ ափնջիկ հանդերձ Ցօբելեանական Ալբոմով-Ալմանախով 5 ր. (արտասահման 10 ր.)

Հասցէն՝ Тифлисъ. редакція Агбюръ կամ Таразъ. Tiflis, Rédaction Agbur կամ Taraz.

1—1

ՆՈՐ ՏԱՐՎԱՅ

№ 5 ՀԱՅԵԼԻ № 5

Թերթ ու կէս, գեղարուեստական բաժնով, Թուցիկ № 1—ՊՐԵՄԻԱՅՈՎ, որը մի գեղարուեստական նկար է,

ՀԱՒԱՏ ՅՈՅՍ-ՍԷՐ

Գնողները թերթի հետ ձրիաբար ստանում են և ՊՐԵՄԻԱՆ:

Լոյս կը տեսնի ուրբաթ, յունվարի 5-ին

առ. 2—2

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

քթի, կոկորդի եւ ականջի

հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի երեկ. 5—7 ժ. ցի ուրբաթ

Միխայլովսկի պրօսպ., տ. Ֆորբերի № 11.

(կ. չ.) առ. 16—60

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համերաշխութեան դէմ դուրս. Վերջին տեղեկութիւններ. Հայ և Թուրք հարևանների մի պարտաւորութիւնը. Կաթողիկոսական կոնդակ. Շահի մահագոյժը. Մամուլ. Առաջիկայ ընտրութիւնները. Կատարեցէք ձեր պարտքը. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Թիւրքահայոց սահմանադրութիւնը. Բիւրոկրատիզմը և մեր հասարակական հիմնարկութիւնները. Թատրոն և երաժշտութիւն. Սև ծովը ցամաքում է. Ցուցահանդէս երաժշտական աշխարհ. Նամակ Պետերբուրգից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Թաթախման երեկոն.

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԴՈՒՐՍ

I

Մեր հասարակութիւնը իր զարգացումը ապահովելու համար պէտք է կարողանայ միաժամանակ երկու տեսակ գործունէութիւն ունենալ, մի կողմից մշակել և գործադրել մի շարք դրական ծրագիրներ, իսկ միւս կողմից առաջն առնել այնպիսի երևոյթների, որոնք գալիս են խանգարելու և խախտելու առաջադիմական շարժումները:

Այդ երկրորդ տեսակի գործունէութիւնը որոշ պատմական շրջաններում մեծ նշանակութիւն է ստանում: Եւ մենք այսօր, տարվայ սկզբին իսկ, մտադիր ենք խօսելու դաւադրական այն տեսակ խաղերի մասին, որոնցով չափազանց առատ էր անցեալ տարին, որոնցից մենք այնքան սոսկալի աղէտների մէջ ընկանք և որոնք կարող են դարձեալ կրկնվել մեր երկրի կեանքում:

Մեր խօսքը այն նենգ, չարամիտ զրոյցների մասին է, որոնք յայտնի են դարձել հասարակութեան խաւերում «պրովոկացիա» անունով: Այդ զրոյցները գործում էին մարդկանց կրքերը, երկիւղներ ազդում և դրդում մարդկանց այնպիսի քայլեր անելու և գործողութիւններ կատարելու, որոնք յետոյ դառնում էին պատուհասներ մեր երկրի համար:

II

Դժբաղդաբար պրովօկացիան դեռ չէ անհետացել բոլորովին և փորձում է գործել նաև ներկայում:

Հասարակութեան խաւերում տարածում են լուրեր, որ իբր թէ ընդհարումներ են պատրաստում զանազան ազգերի մէջ Թիֆլիսում և ուրիշ տեղերում:

Այդպիսի լուրերը, որքան էլ անհիմն լինեն, գտնում են հաւատացողների մի որոշ թիւ, որոնց և մոլորեցնում են:

Ուստի և մեր հասարակութեան գործօն ուժերը պէտք է ամեն միջոց գործ դնեն մերկացնելու պրովօկացիայի արտայայտութիւնների դէմ, պահանջելով որ իւրաքանչիւր վտանգաւոր լուր հաղորդող անձն ապացուցէ իր ասածը հաւաստի ցուցմունքներով:

Հասարակութիւնը պէտք է կարողանայ զսպել պրովօկացիայով զբաղված մարդկանց և անվտանգ դարձնէ նրանց չար դաւադրութիւններն ու նենգութիւնները մեր ազգաբնակութեան համար:

III

Թիֆլիսի մէջ, օրինակ, այս վերջին շաբաթներում մի քանի անգամ կեղծ և անհիմն լուրեր էին տարածվել հայերի և վրացիների մէջ ծագած գժտութիւնների մասին: Հայերը զարմանում էին, որ իրանց վերագրում են թշնամութիւն դէպի վրացիները, իսկ վերջիններս նոյնպէս զարմանում էին, լսելով այդպիսի զրպարտութիւններ իրանց մասին:

Արդեօք չարամիտ դաւադրութիւնն էր այդտեղ գործում թէ մի ուրիշ երևոյթ, մենք չը գիտենք, բայց պարտաւոր ենք համարում զգուշացնել հասարակութիւնը այդպիսի նենգ ու կորստաբեր լուրերի վերաբերմամբ: Թող հասարակութիւնը թոյլ չը տայ, որ իր հետ նոր խաղեր խաղան և նոր թիւրիմացութիւնների մէջ գցեն իրան:

Նոյն տեսակ լուրեր որոշ շրջաններում տարածում են նաև հայ-թուրքական յարաբերութիւնների մասին:

Եւ ժողովրդի կողմից մեր խմբագրութեանը յաճախ դիմել են մարդիկ տեղեկանալու, թէ որքան հիմնաւոր են տարածված լուրերը:

Մենք միայն զարմացել ենք մարդկանց դիւրահաւատութեան վրա:

IV

Պատմական այն շրջանը, որ մենք անցնում ենք, դեռ հանգիստ չէ. հորիզոնը դեռ պարզված չէ. երկինքը դեռ չէ մաքրվել ամպերից. ճանապարհները դեռ ընդարձակ տարածութիւն ունեն:

Այդպիսի ժամանակ դաւադրութեամբ զբաղվողները կամ պրովօկացիան դեռ կարող են յոյս ունենալ, որ նրանք կը գտնեն թէ միամիտների և թէ յանցաւոր անձնաւորութիւնների, որոնց միջոցով և կիրագործեն իրանց սառը նպատակը:

Իսկ մեր առաջ կանգնած են զանազան տեսակ շփումներ, օրինակ, ընտրութիւններ, պայքարներ և համախմբումներ:

Մի այդպիսի ժամանակ մեր երկրի բոլոր ինտելիգենտ և բանիմաց անձերի վրա ծանրանում է պարտաւորութիւն ուշի ուշով հետևել, որ դաւադրական խաղերը աշխատ թիւն չը գտնեն մեր իրականութեան մէջ և չը կարողանան նորից սև էջեր բանալ մեր դժբաղդ երկրի կուլտուրական պատմութեան էջերում:

Ընդհանուր պարտաւորութիւն է դրված մեր առաջ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Մշակի» ներկայ համարում հրատարակում ենք Վեհափառ Կաթողիկոսի մի նոր կոնդակը կրթական գործի ղեկավարութեան մասին: Հետևեալ համարում մենք կը հաղորդենք մեր կարծիքն այն կարգերի մասին, որ ցանկանում է մտցնել այդ կոնդակը՝ կան աննպաստակայարմար կէտեր:

—

Գանձակ, 1 յունվարի

Երէկ դեկտեմբերի 31-ին, ս. Յովհաննէս մայր եկեղեցում հոգեհանգստեան մաղթանք կատարվեց հանգուցեալ Մուզաֆֆերէդդին Շահի համար: Պատարագին ներկայ էր պարսից հիւպատոս Միրզա Քերիմ-խանը և մօտ 20 հոգի պարսկահպատակներ: Եկեղեցում հայերէն և թուրքերէն խօսեց փոխանորդ Կորիւն վարդապետը, յիշատակելով հանգուցեալ Շահի գործունէութիւնը: Եկեղեցին լիքն էր բազմութեամբ. հոգեհանգստից յետոյ կլուբի դահլիճում հիւպատոսին և միւս պարսիկներին հիւրասիրեցին սուրճով:

Այսօր առաւօտեան ժամի եօթ և կէսին տեղի ունեցաւ արեգակի խաւարումն որը տևեց 15 րօպէ: Երկու օր է կատարեալ ձմեռնային եղանակներ է անում:

Ա. Սահակեան

—

Թեհրան, 3 յունվարի.—Նոր Շահը հիմնադրական ծանօթացաւ իր իրաւութեան հետ. առ այժմ նա խօսք փոխում է նոր կարգադրութիւններ անել պաշտօնեաների տեղափոխելու և նորերին նշանակելու նկատմամբ: Թեև թագադրութիւն չը կայ, սակայն կայ մի ծէս որ յիշեցնում է թագադրութիւնը. Շահը նստում է գահի վրա շրջապատված բարձր պաշտօնեաներով և հագնում է Հնդկաստանի հերոս-նուաճող Նադիր Շահի թագը: Այդ րօպէից էլ նա բոլոր հոգևոր և մարմնաւոր իրաւունքների ժառանգորդ է համարվում: Այս ծիսակատարութիւնը կը կայանայ մօտ օրերս:

(«Հ. Գ.»)

—

Սղնախ, 2 յունվարի

Շաբաթ օրը նոր գաւառապետը կանչեց քաղաքացիներին և ասաց նրանց. «Շատերի վրա մնում են արքունական հարկերի պարտիքներ. առաջարկում եմ վճարել հարկերը, ապա թէ ոչ խիստ միջոցների կը դիմենք, և այն ժամանակ կը գանգատվէք ոստիկանութիւնից: Լսել ենք, որ բռնութեամբ պահանջում են ձեզանից փողեր. դրա պատճառով մինչև անգամ մարդ է սպանվել: Մեզ յայտնի չէ, ովքեր են դրանք. ասացէք, և մենք կը պատժենք նրանց»: Պատասխանել են, որ վախենում են այդ հարցի մասին խօսելու: «Դուք այդպիսով կը կեղեքվէք և վերջը բոլոր կը կոտորէք»,—ասել է գաւառապետը:

Յունվարի 1-ի առաւօտեան նկատելի եղաւ արեգակի մասնաւոր խաւարումը: Եղանակներն անցնում են պարզ. ձիւն դեռ չէ եկել:

N. N.

ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԻ ՄԻ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

—

Հայ թուրքական ընդհարումները սարսափելի աղէտներ բերին թէ հայերին և թէ թուրքերին:

Երկուսն էլ սգաւոր, երկուսն էլ իրանց մտերիմներին կորցրած եղբայրասպան կռիւների մէջ, երկուսն էլ անտեսապէս քայքայված, երկուսն էլ ներկայումս սովի և կարօտութեան ճանկերում:

Դառն էր դասը, ծանր էր մեր ընդհանուր տնտեսութեան պատիժը:

Կործանվեցինք երկուսս էլ:

Եւ ինչո՞ւ համար:

Կարծես միայն նրա համար, որ գանք այն եզրակացութեան, թէ հարևանների թշնամութիւնը մի սոսկալի չարիք է և թէ մի երկիր կարող է առաջադիմել միայն այն ժամանակ, երբ նրա մէջ ապրող բոլոր տարրերը գործում են համերաշխութեամբ և փոխադարձ աջակցութեամբ:

Եւ այժմ թէ մեզանից իւրաքանչիւրի և թէ մեր երկրի ընդհանուր բարօրութեան համար անհրաժեշտ է, որ յիշենք սարսափելի դասը և երկու հարևաններս էլ ձեռք զարկենք նորից կազդուրելու ժողովրդին, վերականգնելու անտեսութիւնը և միահամուռ ուժերով զարգնելու մեր երկրի ընդհանուր զարգացման գործը:

Առաջին հոգսերից մէկը պէտք է լինի սերմացու հայթայթել գիւղացիներին գարնանացան անելու համար: Եթէ այժմ նախօրօք հոգս չը տարվի այդ մասին, եթէ գիւղացուն չը տուինք միջոց սերմանելու արտերը, այն ժամանակ նա դարձեալ ամբողջ մի տարի զրկված կը լինի ապրուստի միջոցներից: Եթէ այժմ տանք նրան մի պուդ ցորեն սերմացու, նա այդ ցանելով կը դարձնէ 5—10 պուդ. իսկ եթէ չը տուինք, այդ ժամանակ դուք սովիված պէտք է լինենք տալ նրան այդ 5—10 պուդ ցորենը:

Մենք վիճակագրական թւեր չունենք բոլոր վնասված գիւղացիների մասին. բայց որքան մեզ յայտնի է մեր քաղաքի տեղեկութիւններից, ներկայումս սատարի կարօտ գիւղացիների թիւը պակաս չէ 6700 տնից, որոնցից 4500 տունը հայեր են, իսկ 2200-ը թուրք: Այդ տները իրանք իրանց միջոցներով անկարող են սերմանել իրանց արտերը:

Պէտք է նրանց օգնել և օգնութեան հոգատարութեամբ զբաղվել հէնց այժմեանից:

Մօտենում է արտերի մշակութեան ժամանակը:

Եթէ հաշւենք, որ իւրաքանչիւր տան հարկաւոր է միայն 10 պուդ ցորեն (իսկ գիւղական կեանքի ծանօթները գիտեն, որ շատերը ցանում են դրա կրկնապատիկը, եռապատիկը և էլ աւելի), կը տեսնենք, որ հայերը պէտք է պատրաստեն 45,000 իսկ թուրքերը 22,000 պուդ ցորեն, կամ եթէ հաշւենք ցորենի պուդը միայն 1 ռուբլի 60 կոպէկ, հայերը պէտք է ծախսեն սերմացուի վրա 72,000, իսկ թուրքերը 35,200 ռուբլի:

Մենք շատ առիթներ ենք ունեցել խօսելու այս առարկայի մասին և ներկայ նկատողութեամբ մենք հրաւիրում ենք նրա վրա մեր թուրք հարևանների առանձին ուշադրութիւնը:

Եթէ գիւղացին չը կազդուրվի, նա մի ծանր բեռն կը դառնայ մեր երկրի վրա, որը առանց այն էլ տնտեսական թշուառ վիճակի մէջ է:

Մենք հայերս մեր կողմից, իսկ թուրքերն էլ իրանց կողմից պէտք է առեն ջանք գործ դնեն մաքառելու այն անյաջողութեան դէմ, որի մէջ ընկել է գիւղական ժողովուրդը:

Մեր ցոյց տուած գումարները նուազագոյններն են և նրանց ապահով կերպով կարելի է կրկնապատկել, որովհետև մենք հաշուի չենք առել այն գիւղերը, որոնք վնասվել են միայն մասամբ և բացի այդ՝ գիւղացիներից շատերը կորցրել են նաև իրանց լծկան եզները, գութանները և ուրիշ գործիքները:

Կարևոր ենք համարում յիշեցնել, որ սերմացուն պէտք է գնել մեր երկրում և յոյս չը դնել Ռուսաստանի ցորենի վրա, որովհետև նա բուսել է ուրիշ կլիմայական պայմաններում: Ռուսաստանի ցորենը յարմար է ուտելու համար:

Սերմացուն պէտք է լինի կարելին չափ ընտիր, որպէս զի արդարացնէ իր վրա դրված յոյսերը:

Ա. Ք.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

—

Մկրտիչ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. Գեհրգուոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. Գեկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. Գեբօպառահ Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի Նախագահի հոգաբարձութեան Թեմական դպրանոցին Տփխեաց Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի հարազատ Մայր Աթոռոյս հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք:

Նախ քան զգումարումն Բ. Կեդրոնական Ժողովոյ որպէսզի ծխական դպրոցք մեր ոչ միասցեն ի խնամս կամայականութեան և անձնական հաճոյից, իբրև զժամանակաւոր կարգադրութիւն, պատուիրեմք հոգաբարձութեանդ, որպէս զի նորաբարձութեանդ ժողովրդականաց համայն թեմի, ի կատար ածել զնետևեալս մինչ յ20 Ն յունվարի 1907 ամի:

Ա) Տամք իրաւունս հոգաբարձութեանդ ընդ նախագահութեամբ առաջնորդի ընտրել թեմական (շրջանային) տեսուչս յանձանց բարձրագոյն կրթութեամբ:

Բ) Թողումք ի կամս հոգաբարձութեանդ պարզաբանել, թէ քանի տեսուչք պարտ են լինել ի թեմին, մի թէ առաւել:

Գ) Ամենայն ծխական դպրոցք և ուսուցիչք լիցին ընդ հսկողութեամբ թեմական տեսչաց ըստ սահմանին, որ որոշէ ուսուցչական համագումարն, այն է զի նոցա լիցին իրաւունք շրջելոյ ի դպրոցս, հսկելոյ ի վերայ գործունէութեան և պաշտօնէից, ներկայ լինելոյ զատոյց, նստից հոգաբարձական, մանկավարժական և խառն ժողովոց առանց ձայնի իրաւանց, ի ժողով հրաւիրելոյ զհոգաբարձուս և զուսուցիչս, պահանջելոյ զկանոնաւոր քաղաքութիւնս ի նոցանէ, յորդորելոյ բանալ դպրոցս, տալ տեղեկագիրս ուսումնա-

բանաց ուսումնական խորհրդոյն, իսկ տնտեսականէն հոգաբարձութեանց թեմական դպրոցին:

Դ) Ջեռնարկել թեմական տեսուչս ընդ արձանագրութեամբ հոգաբարձական ժողովոյն առաջի առնել Մեզ ի հաստատութիւն:

Ե) Զնիւթական ապահովումն թեմական տեսչաց յանձնեմք ամբողջութեամբ ի կարգադրութիւն հոգաբարձական ժողովոյն, զորպիսին ունի հոգալ ի միջի այլոց և յարդեանց դպրոցաց և եկեղեցեաց:

Զ) Թեմական տեսուչք ենթարկին ուսումնական խորհրդոյն էջմիածնի, ընդ որում մասնէն ի յարաբերութիւնս վասն ամենատեսակ ուսումնարանական գործոց:

Է) Զանունս ընտրեալ տեսչաց և տեսչաց թեմական տեսուչք առաքեն ի հաստատութիւն առաջնորդաց և տան տեղեկութիւնս ուսումնական խորհրդոյն:

Ը) Ուսումնական խորհուրդն, որ յէջմիածին՝ կազմի յերից անձանց՝ ի միոյ նախագահէ և յերկուց անդամոց. զնախագահն կարգեմք Մեք, զմին անդամոյ ընտրէ ուսուցչական ժողով Ճեմարանի Մ. Աթոռոյս, և զմիւս անդամն ընտրէ թեմական հոգաբարձութիւն Ներսիսեան դպրոցի ի խառն ժողովի, որ կայմ այի ըստ հրաւիրման թեմ. առաջնորդի յուսուցչաց նորին դպրանոցին և յաւագ ուսուցչաց ամենայն ծխական դպրոցաց Տփխիս քաղաքի: Ցետ հաստատման անդամոց ուսումնական խորհրդոյն՝ նոքա ժողովեսցին յէջմիածին և սկսանիցին գործառնութիւն իւրեանց: Սահմանք պարտուց նոցա պարտին լինել ըստ որոշմանց ուսուցչական համագումարի, այն է վերահսկողութիւն ամենայն դպրոցաց, վախճանական քննութիւն ամենայն գործոց դպրոցաց և պաշտօնէից, մշակումն նախագծից դպրոցական կանոնադրութեան և բարեփոխութեան ծրագրի, պատրաստումն ընդհանուր տեղեկագրի ի վերայ հիման տեղեկագրից թեմական տեսչաց, ընտրութիւն դասագրոց և նպաստումն հրատարակութեան նոցին, զնել լինել պատրաստելոյ զուսուցիչս ի մանկավարժական գիտելիս, կազմումն և կառավարելն դպրոցական ֆոնդին, գումարումն ուսուցչական ժողովոյ առնուազն մի անգամ յընթացս չորից ամաց:

Թ) Ցկզամումն ուսումնական խորհրդոյն ամենայն զրագրութիւնք զուսումնարանաց ունին գումարել ի Դիւանս Մեր:

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ի դեկտեմբերի 1906 ամի
և ըստ տումարիս մերում ՌՅԾԶ.
Ի Հայրապետութեան մերում ԺԳ. ամի
յԱրարատեան Մ. Աթոռ ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ:
Թ. 1738.

ՇԱՀԻ ՄԱՀԱԳՈՅԺԸ

I

Շուշի, 1 յունվարի

Պարսից Մուզաֆֆէր-Էդդին Շահի մահվան առիթով դեկտեմբերի 30-ին, ցերեկվայ ժամը 11 և կէսին, տեղիս Թուրքերի գլխաւոր մէչեթում մաղթանք կատարվեց, որին ներկայ էին՝ բացի դագիից, Թուրք հոգևորականութեան ներկայացուցիչներից և ժողովրդից՝ նաև հայ հոգևորականութեան ներկայացուցիչները և բաւականաչափ հայեր զանազան խաւերից: Մէչեթում Ներսէս վարդապետը համառօտ խօսքերով գովաբանեց հանգուցեալ Շահի մարդասիրական յատկութիւնները, դէպի իր հպատակները՝ առանձնապէս դէպի հայերը՝ ունեցած հայրական խնամքը և օրինակելի հոգատարութիւնը:

Մաղթանքից յետոյ հայերից և Թուրքերից մի քանի աչքի ընկնող անձեր սկսեցին խօսել հայ-Թուրքական ընդհարումների և վերջիններիս շնորհիւ առաջ եկած աղէտաբեր հետևանքների մասին: Երկու կողմն էլ միաձայնու կերպով ջերմ ցանկութիւն յայտնեց ամեն ջանք գործ դնել դրականապէս վերջ տալու եղբայրասպան ընդհարումներին, վերա նորոգելու նախկին բարեկամական անկեղծ յարաբերութիւնները: Եւ որպէսզի կարելի լինի իրականացած տեսնել այդ բարի ցանկութիւնները, իւրաքանչիւր կողմը որոշում կայացրեց կռիւ մղել պրովոկացիայի դէմ, առանձին խնամքով և բուռն ջանքերով հեռանել միանգամայն արմատախիլ անելու իր մէջ գոյութիւն ունեցող և ունենալիք մութ ույժերը, խուլիգանացած տարրերը:

Մենք եւ միացնում ենք մեր ջերմ փափագը՝ այդ համակրելի ցանկութիւնները և որոշումները գէթ այս անգամ իրականացած տեսնելու: Թէ՛ հայ և թէ՛ Թուրք ժողովրդի ներկայումս բարձրացող աղաղակող թշուառութիւնները անպայման այդ են պահանջում:

Մաղթանքի օրն առաւօտեան հայերը փակել էին իրանց խանութները: Փակված էին նոյնպէս և Թուրքերի խանութները:

Քաղաքագլուխ Քալանթարեան նոյն այդ օրը Շուշու հայ և Թուրք հասարակութեան կողմից ցաւակցական հեռագիր ուղարկեց Թէհրան:

Շահի մահվան առիթով հետևեալ օրը, դեկտեմբերի 31-ին, պատարագից յետոյ մաղթանք տեղի ունեցաւ Ղազանչեցոց եկեղեցում, որտեղ ներկայ էին՝ Ներսէս վարդապետը, բոլոր եկեղեցիների քահանաները, բազմաթիւ հայեր, Թուրքերի դագին, մօլլաներ և բաւականաչափ Թուրքեր:

Քարոզներ խօսվեցին երկու կողմերի հաշտարականութեան կողմից: Քարոզների մէջ, ի միջի այլոց, նորից ջերմ ցանկութիւններ եղան հայ-Թուրքական սիրալիր յարաբերութիւնների վերականգնման և համերաշխութեան մասին:

Դարաւոր նախանձելի հարևաններ եղած և միայն մօտ անցեալում աննպատակ թշնամացած երկու ազգերի՝ եկեղեցում միահամուռ խմբված լինելը, դրանց անկեղծ խոստովանութիւններն ու բարի ցանկութիւնները՝ ինչ ասել կուզէ՝ բաւական տպաւորիչ էին:

X

II

Բաքու, Դեկտեմբերի 29-ին

Պարսից Շահն շահի սպասելի մահը խորին և ցաւագին տպաւորութիւն թողեց տեղիս ազգաբնակութեան վրա ընդհանրապէս և մասնաւորապէս մեզ հայերից վրա:

Վերջին երկու տարվայ կարմիր ու արիւնաներկ անմիտ հայ-Թուրքական ընդհարումների ժամանակ, ինչպէս յայտնի է, մենք արտասուքի ու տանջեկ ալպաստում էինք, որ ահա այսօր կամ վաղը պարսկահպատակ մի բուռն հայերը զոհ կը գնան մոլեռանդ պարսիկ խուժանին, սակայն մարդասէր ու օղորմած Մուզաֆֆէրէդդին Շահի գթոտ ու հայրախնամ կառավարութիւնը ամեն միջոց ձեռք առաւ և ջանաց անվտանգ պահելու իր հաւատարիմ հպատակ հայերին և պահեց:

Ցայտնի է նոյնպէս, որ շատ մութ ու պղտոր անձնաւորութիւններ, գլխաւորապէս Կովկասից, ամեն ջանք գործ դրեցին Պարսկաստանի պարսիկ ազգաբնակութեան մտքերը խառնել, սակայն նրանց «տալը քարին առաւ» շնորհիւ դարձեալ Շահի մարդասիրական զգացմանց, և ահա թէ ինչու մեզ համար անդառնալի կորուստ պէտք է համարել Իրանի վեհապետի մահը:

Ձենք յիշում վեհապետի այլ համակրական ցոյցերը դէպի պարսկահպատակ հայերը:

Գալով Թուրք՝ գլխաւորապէս պարսիկ ազգաբնակութեան ներկայ յուսահատ դրութեանը, պէտք է ասել, որ նա միանգամայն տեղին և իրաւացի է: Դեռ չէ անցել երկար ժամանակ, որ հանգուցեալ վեհապետը իր հրովարտակներով սահմանադրական իրաւունքներ խոստացաւ տալ պարսիկներին, և պարսիկները, դեռ չը վայելած ու չը հասած իրանց ցանկութիւններին, այսօր գերեզման են դնում սիրած Թագաւորին, և ահա թէ ինչու, մահվան լուրը ստացած րոպէից, տեղիս Թուրք և պարսիկ ժողովուրդը սուգ ու շիւան է անում և այդ արտայայտում է հրապարակական Թափօրներով:

Երէկ և այսօր մի քանի խմբեր կազմած զինուորական նրաժշտախմբով, Շահի պատկերը սև շղարշով ծածկած, ձեռքներին բարձր բռնած, սև դրօշակներով մահվան քայլերը նուագելով, յուսահատ ու տխուր դէմքերով, արտասուալից աչքերով, ծանր ու յամր քայլերով շրջում են փողոցներով. առաջնորդող խմբին հետևում է մի բազմամարդ ամբոխ հոգևորականութեան հետ, ցած ու սիրտ ճմլող ձայնով սգոյ երգը երգելով ու արտասուելով:

Ծնչող ու յուզիչ պատկերութիւն են թողնում այդ սգոյ Թափօրները, և հանդիսատեսի աչքերը լցվում են արտասուքով... արտասուքով, որին արժանի կերպով իր հետ գերեզման է տանում մարդասէր վեհապետը:

Մենք տեսանք պատշգամբներում կանգնած կանանց, որոնք լուիկ մնջիկ Թաշկինակները աչքներին արտասւում էին Թափօրն անցնելու ժամանակ:

Պարսկաստանը, ինչպէս յայտնի է, այժմ նոյնպէս գտնվում է երկունքի մէջ, բայց մենք յաւակնութիւն ունենք հաւատալու, որ Թագաժառանգ ներկայ նորընտիր Մահմադ-Ալի Շահը, որը վայելում է Պարսկաստանի սէրն ու համակրանքը, պատճառ չի դառնայ նոր խլրտումների ու դժուարութիւնների և, հետևելով իր հանգուցեալ հօր լուսամիտ ուղղութեանը, կաշխատէ ի կատար ածել ժողովրդեան արդար պահանջները, տալով երկրին լայն սահմանադրական իրաւունքներ: Դա է ժամանակի պահանջը, դա է պահանջում Պարսկաստանի տնտեսական ու քաղաքական օգուտը:

Մենք լիայոյս ենք, որ, Պարսկաստանի սգի օրերն անցնելուց յետոյ, այնտեղ կը բացվի մի նոր արշալոյս, որի մի շողն էլ կընկնի բազմաչարչար պարսկահպատակ հայերիս վրա:

Արդեօք հայութիւնը պարտաւոր չէ՞ երախտագիտական մի գործով անմահացնել հանգուցեալ Մուզաֆֆէրէդդին Շահի անունը...

Կարծում ենք ..

Ռ. Պօղոսեանց

III

Գանձակ, դեկտեմբերի 29-ին

Երէկ, ամսոյ 28-ին, ստացված հեռագիրը հաղորդեց Մուզաֆֆէրէդդին Շահի մահվան ցաւալի լուրը: Բօթաբեր լուրը, որ կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ քաղաքում, խորին վիշտ պատճառեց հայ հասարակութեան խաւերում: Գանձակի հայ հոգևորականութիւնը և հասարակութեան ներկայացուցիչները այսօր ժամի 11-ին գնացին Թուրքաց Թաղը հանգուցեալ Շահի հիւպատոս Միրզա Քերիմ-խանին յայտնելու իրանց վիշտը և ցաւակցութիւնը: Հիւպատոսարանում յայտնեցին, որ նա այդ պահուն գտնվում է Իրանի կոչվող Թաքիայում (աղօթատուն), և հայ ներկայացուցիչների կառքերը ուղևորվեցին դէպի պարսկահպատակների Թաքիան: Աղօթատան շեմքում հայերին դիմաւորեց հիւպատոս Միրզա Քերիմ-խանը պաշտօնական համազգեստով, սեղմելով բոլոր ներկայացուցիչների ձեռքը. Ներկայացուցիչները յայտնեցին իրանց անչափ ցաւակցութիւնը Շահի վաղաժամ կորստեան համար: Հիւպատոսը և մի սէյիդ հայերին առաջնորդեցին դէպի աղօթատուն և նրանց յատկացրին առանձին պատուաւոր մի տեղ, դրսից բերելով աթոռներ: Հիւպատոսը մնաց ամբողջ ժամանակ կանգնած, իսկ Թուրք ժողովուրդը և հոգևորականութեան խումբը ըստ աւանդութեան շարված՝ չոքեցին աղօթատան զանազան մասերում: Հինգ րօպէ աղօթատանում տիրեց խորին լռութիւն: Լռութիւնն ընդհատեց հոգևորականների շարքում բազմած Հաջի Մօլլա Եաղուբը երգելով պարսկական մելամաղձոտ, միևնոյն ժամանակ տխուր Մարսիան—սուգի մեղեդին: Մօլլա Եաղուբի մեղեդին տևեց մօտ քառորդ ժամ, որից յետոյ տեղից կանգնելով երգողը դիմեց հայ հասարակութեանը մօտաւորապէս հետևեալ խօսքերով.

«Այսօր այս տաճարն ենք ժողովվել կրօնով տարբեր եղբայրակիցներս ի տէր հանգուցեալ Մուզաֆֆէրէդդին Շահի համար հոգեհանգստեան մաղթանքներ կատարելու համար: Միայն այսպիսի ցաւալի դէպքերը չը պէտք է միացնեն կրօնով տարբեր երկու եղբայրակիցներին, միևնոյն աղբիւրից ջուր վայելող եղբայրներին: Կեանքի միւս ասպարէզներում եւ երկու եղբայրակիցները պիտի աշխատեն սիրով և համերաշխութեամբ ընթանալու և եղբայրական համերաշխ գործունէութեան կապը ամրացնելու. և համերաշխ գործելու: Ցայտնում եմ իմ և իմ կարգակիցների և պարսիկների կողմից խորին շնորհակալիք հայ հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներին իրանց արտայայտած ցաւակցութիւնների համար»:

Հաջի Մօլլա Եաղուբից յետոյ առաջ. փոխանորդ Կորիւն վարդապետը մի քայլ առաջ գալով՝ դիմեց հիւպատոսին հայերէն հետևեալ խօսքերով, որ ռուսերէն Թարգմանեց բժշկապետ Գերասիմ Մելիք-Բէգլարեան:

«Գանձակի հայ ժողովուրդը լսելով այն ցնցող լուրը և այն վիշտը, որով համակված է այսօր ընդհանուր Իրանը, և այն անապաստ կորուստը, որ զգում է Իրանի որբացած ժողովուրդը յանձին իր սիրեցեալ միապետ հանգուցեալ Շահն շահի, մեզ հոգևորականութեանս և ժողովրդի ներկայացուցիչներիս վրա պարտք է դրել իր կողմից արտայայտելու մեր վիշտը ձեզ, յարգելի հոգևորականներից և Իրանի հպատակ ժողովրդից, և ձեր հանգուցեալ միապետի ներկայացուցչին:

«Հանգուցեալ Շահը իր Թագաւորութեան սկզբից եղել է իր հպատակների համար ոչ Թէ միայն իբրև իրենակալ միապետ, այլ և խնամատար և գթառատ հայր: Նրա տասնամեայ Թագաւորութիւնը իր հպատակների, առաւելապէս հայ ժողովրդի համար մի նոր դարագլուխ կազմեց, դարագլուխ լուսաւորութեան կրթական ասպարէզում, դարագլուխ վաճառականութեան առևտրական ասպարէզում և դարագլուխ երկրի բարգաւաճման նրա վարչական ասպարէզում:

«Տակաւին շատ մօտ ժամանակում էր, երբ ամբողջ Պարսկաստանը տօնում էր իր սիրելի միապետի՝ երկրին շնորհած սահմանադրութիւնը, որով աւելի մեծ և աւելի լայն չափով ազատութիւն էր շնորհում ժողովրդին և հիմնովին կերպարանափոխում էր հին միապետական կարգերը, և այդ նոր շնորհած սահմանադրութեան հիմնական աշխատանքի և իրագործման տենդային պահուն էր, որ անսպասելի կերպով հասնում է նրա կեանքի վախճանը:

«Ձը կայ այլևս Իրանի հայրը, չը կայ այլևս այն մարդասէր և խաղաղասէր միապետը, չը կայ Իրանի հայութեան այն հզօր նեցուկը, որին փողից սովոր էր պարսկահայը վստահօրէն դիմել, իր ցաւը և իր վիշտը լսելի կացուցանել:

«Մի միապետ, որի վստահութիւնը անփոփոխ և անշեղելի մնաց դէպի իր գաղտնի հպատակ հայ ժողովուրդը. մի միապետ, որի մարդասէր և հայասէր հոգու զգացմունքի վրա չը կարողացան ազդել արտաքին ներշնչումներ. նրա հաւատը անսասան մնաց դէպի հայի դարաւոր հաւատարմութիւնը և հանգուցեալը իր փառքը փնտռեց իր հպատակների բարօրութեան, երջանկութեան, լուսաւորութեան և զարգացման մէջ: Նա սիրելի հանդիսացաւ ընդհանուր հայութեան, որի անփոխարինելի կորուստը ողբում է այսօր համայն հայութիւնը և՛ Պարսկաստանում և՛ Պարսկաստանից դուրս օտար երկիրներում:

«Ցաւակից ենք ձեզ, մեծարելի Միրզա Քերիմ-խան, ձեզ չափ հաւասար զգում ենք կորստի մեծութիւնը. բայց մխիթարվում ենք անցեալի քաղցր և անմոռանալի յիշատակներով: Մխիթարվում ենք ապագայ հաստատ յուսով և համոզմունքով, որ մեծագործ հօր իմաստուն ժառանգը՝ Մահմադ-Ալի Միրզան աւելի քան գերազանց հանդիսանայ իր հանգուցեալ հօր սահմանադրութեան մեծ գործերում:

«Թող երկնքի ամենակարող Տէրը պարգևէ հանգիստ հանգուցեալ Մեծ Շահնշահին, Թող նրա բազմաթիւ բարեգործութիւնները լուսաւոր ճրագ լինեն հանգուցեալի հոգուն դէպի յաւիտենական հանգիստ: Եւ Թող աստուածային կարող և հզօր աջը հովանի և առաջնորդ հանդիսանայ Մահմադ-Ալի նոր Շահնշահին իր արքայական մեծ ասպարիզում: Թող տայ Աստուած նրան արևշատութիւն, իմաստութիւն և կարողութիւն անվրդով կերպով կառավարելու իր ընդարձակ պետութիւնը և հասցնելու իր ժողովրդին կատարելութեան, լուսաւորութեան և զարգացման աստիճանին ի փառս իր անուան և գոյութեան և ի պատիւ Իրանի պետութեան: Ամէն»:

Փոխանորդից յետոյ խօսեց հիւպատոս Միրզա Քերիմ-խանը ռուսերէն շատ համառօտ, յայտնելով հայ հասարակութեան ներկայացուցիչներին և հայ հոգևորականներին իր շնորհակալութեան հաւատիքը նրանց արտայայտած ցաւակցութեան համար, միաժամանակ յոյսեր տածելով որ նոր Շահն շահը իր հանգուցեալ իմաստուն հօր շաւղով գնալու մեծ գրաւական է, որ հայը կենդանի ժամանակ իր մօտ հրաւիրեց ներկայ Շահին և իր իմաստուն հրահանգը տուեց, որի իրագործման համար ոչ մի կասկած լինել չէ կարող: Հիւպատոսը կրկին անգամ յայտնելով իր շնորհակալութիւնը, հայերը սեղմեցին ինչպէս հիւպատոսի, նոյնպէս և պարսիկ հոգևորականութեան ձեռքը և բաժանվեցին:

Մոռացայ յիշելու, որ փոխանորդը յայտնեց, որ կիրակի օրը Ս. Յովհաննէս մայր եկեղեցում կատարվում է հոգեհանգստեան մաղթանք հանգուցեալ Շահնշահի հոգու հանգստութեան համար:

Հիւպատոսը խոստացաւ ներկայ լինելու հոգեհանգստեան մաղթանքին:

Ա. Սահակեան

IV

Բաթում, դեկտեմբերի 30-ին

Դեկտեմբերի 28-ին առաւօտեան ժամի 11-ին կատարվեց պարսից Մուզաֆէրէդդին Շահի մահվան առթիւ հոգեհանգիստ քաղաքիս Ազիզիէ ասված մզկիթում. այստեղից խուռն բազմութիւնը շտապից հայոց ս. Փրկիչ եկեղեցին: Ներկայ էին պարսից մօլլան, հիւպատոսը, անթիւ թւով մահմեդականներ, բոլոր պարսկահպատակ հայերը, այլ և ռուսահպատակներից շատերը, նաև ռուս գործակալ-քահանան: Եկեղեցին Թաղված էր մահերի լոյսի տակ. զանգերի տխուր ղօղանջիւնը և հոգեհանգստեան կարգն սկսվելուն պէս պարսիկներն սկսեցին երեխայի պէս լալ, որ ապացոյց էր Թէ որքան անկեղծ կերպով սիրում էին հանգուցեալ Շահին: Խօսեց պարսից մօլլան. խօսեց հայր Մելեան, որին Թարգմանում էր պ. Յակոբ Տէր-Մկրտչեան. գրաւոր կարդաց նոյն Տէր-Մկրտչեան. խօսեց պ. Արդումեան Աւագեան և դարձեալ մօլլան. հանդէսը փակվեց երկսեռ խմբի «Հայր մերով»:

ՄԱՄՈՒԼ

Հայ մամուլը բոլորելով 1906 Թւականի ծանր, արիւնալի տարին, երբ Թուրք-հայկական եղբայրասպան կռիւը փոխարինվեց հասարակական տարբեր խաւերի զօրեղ պայքարին, սաք գրեց 1907 Թւականը: Մամուլը հասարակական զանազան հայեացքների, տրամադրութեան ու ձգտումների արտայայտիչն է, այդ պատճառով աւելորդ չենք համարում մի փոքր գաղափար տալ մեր ընթերցողներին ժամանակակից հայ մամուլի մէջ երևան եկած մի քանի կարծիքների մասին:

«Ժամանակ» լրագիրը 1907 Թւի իր առաջին համարով մի տօնական նուէր է տալիս իր գիտակից ընթերցողներին և համակրողներին. Վերածնութեան, սիրոյ ու համերաշխութեան մեծ տօնի համար նա ոչինչ չունի տալու, բայց եթէ ինսինուացիաներ, հայհոյանքներ ու ատելութիւն, եթէ չասենք պօգրօմներ քարոզներ. ոչինչ չունի երևան հանելու, բայց եթէ «խեղճ ու թշուառ պայլի» տրամադրութիւն ու ախորժակ:

1906 Թւականի կովկասահայ կեանքի և մամուլի նշանակալից երևոյթների արձանագրութեան մէջ, «Ժամանակը» պատկերացնում է ոչ Թէ Դաշնակցութեան կռիւը ազատագրական շարժման համար, բիւրօկրատական ռեժիմի դէմ, այլ ենկապէս այն պայքարը, որ մղվում էր Դաշնակցութեան բիւրօկրատական ռէժիմի դէմ մի կողմից, իսկ միւս կողմից՝ Դաշնակցութեան արտաքոյ անդամներին ու արտաքոյ տարրերը Թագցնելու համար: Պարզ է, որ ճահճացած «Ժամանակը» իր ամբողջ Թոյնը Թափում է նախ «Մշակի» վրա, որ յանդգնեց բարձրացնել իր ձայնը այդ ճահճակար ու ամօթաբեր արարքների դէմ, և ապա իր կօնկուրէնտ սօցիալդեմօկրատիայի վրա:

«Կովկասահայ կեանքը 1906 Թ.» խորագրով յօդուածում «Ժամանակի» սիւներից մէկը—Խաժակը, ըմեղն Դաշնակցութեան հովանու տակ կատարվող անվայել գործերի մերկացումներից, հետևեալ մարգարիտներն է շարահիւսում, որ առաջ ենք բերում իբրև մի նմոյշ Թէ ինչպիսի հոգեկան ու մտաւոր հիւանդ «մեծութիւններ» են հանդէս եկել մեր գրական ու հասարակական խղճուկ ասպարիզի վրա:

Բուրժուական-կղերական բանակն իր ձեռքէն գործիք դարձրեց մի քանի արտաքսած խմբապետներ, մի քանի կասկածելի բարոյականի տէր «հերոսներ» և դրանով ուզեց տարրալուծել Դաշնակցութիւնը, բայց արդէն յուսախաբւել է սկսել իր այդ խորամանկ հաշիւ վերաբերմամբ:

Վերջապէս նոյն սև բանակը մի հատ մի յն խելացի քայլ արեց. փոխանակ քարշ գալու Դաշնակցութեան և միւս կուսակցութիւնների պոչից, վճռեց կազմել իր սեփական բուրժուական կուսակցութիւնը:

Սև բանակը...

Սև բանակ են կոչվում նրանք, որոնք բողոքում են Դաշնակցութեան ծիրանու տակ պատսպարված այն անազնիւ գործիչների դէմ, որոնք, ժողովրդի ազատագրութիւնն ու պաշտպանութիւնը պատրուակ բռնած, շահագործում, կեղեքում են նրանց, ծեծում, լլկում են հայ կնոջը: «Մշակ» ը կատարեց իր պարտքը հայ ժողովրդի առաջ. արտայայտեց նրա բողոքի ձայնը, մերկացրեց այդ դիմակաւորված բիւրօկրատների շահագործութեան սիստեմը և բարձրացնելով վարագոյրի մի ծայրը երևան հանեց հարիւրաւոր փաստերից մի քանիսը միայն: Բայց հէնց այդ մի քանիսն էլ բաւական էր հակառակ բանակում կռնչիւն ու վայնոց բարձրացնելու համար: Դա դաւաճանութիւն է, լավից նրանց շարքերում. դա մատնութիւն է, աղաղակեցին նրանք: Սուտ է, պրօվօկացիա է,—ահա նրանց միակ պատասխանը: Փաստերը մնում են աններքելի փաստեր, բատմնելի արարքները մնում են նախատինք ամեն ժամանակների համար:

Նրանք հայ ժողովրդի ազատագրութեան պատմութեան էջերում կը մնան իբրև սև բիծ: Ժողովրդի մէջ մեծ դժգոհութիւն կայ Դաշնակցութեան դէմ. այդ չէք կարող հերքել, ոչ էլ կարող էք բիւրօկրատական ձևերով ձեր պրեստիժը վերադարձնել, պարոններ:

Դուք, որ այդքան սիրում էք ժողովրդի շահերի անունից ճառել, ցոյց տուէք, որ նրանց դուք բարձր էք դասում ձեր կուսակցական շահերից: Ուլտիմատումներով չէք կարելի ջնջել փաստերը. նրանք այնուամենայնիւ երևան կը գան, և այն ժամանակ բողոքը կը փոխվի զայրոյթի արտայայտութեան:

*

Հոսանք լրագիրն էլ, արձանագրելով 1906 Թւականի կովկասահայ կեանքի մէջ տեղի ունեցած նշանակալից երևոյթները, բնականաբար մեծ տեղ է տալիս Դաշնակցութեան գործունէութեանը և այսպէս է բնորոշում նրա կատարած դերը:

Գլուխ կանգնելով ինքնապաշտպանութեան կազմակերպման գործին, Դաշնակցութիւնը մեր ամբողջ հասարակական կեանքը ենթարկեց իր մօնօպօլիային: Դնելով ինքնապաշտպանութեան գործը միլիտարիստական-բիւրօկրատական հողի վրա, ծառայեցնելով իբրև նիւթ հայ լումպէնպրօլետարիատը, որը առատօրէն մատակարարում էր տաճկահայ գաղթականութիւնը, Դաշնակցութիւնը դարձաւ ամբողջ հայ ժողովրդի գլխի և մտքի բռնապետը: Միլիտարիստական-բիւրօկրատական ամբողջ կազմը կոշմարի նման ընկաւ հայ գրականութեան վրայ իր ամուր ճանկերի մէջ շղթայելով ժողովրդական ձգտումների ամեն մի արտայայտութիւն: Շնորհիւ դաշնակցական տաքտիկայի ամբողջ հայ ազգաբնակութիւնը տարւեցաւ հայ-Թուրքական ընդհարումներով, բոլորովին մեկուսանալով ազատագրական շարժման արտայայտութիւններից: Լումպէնպրօլետարական միլիտարիզմը այլասերելով հայկական իրականութիւնը հայ մասսաների հասցրեց ծայրայեղ խուլիգանացման, 1906 Թւականի առաջին կիսամեակը «յեղափոխական» միլիտարիզմի տիրապետութիւնը հասաւ իր ապօգէին:

Սակայն իրականութիւնը երկրորդ կիսամեակում, «Հոսանք»-ի ասելով, շուտով փոխվեց, հէնց որ

Մանր բուրժուազիան յանձին Դաշնակցութեան ցանկացաւ տիրապետել բոլոր հասարակական հիմնարկութիւններին... Եւ հրապարակ դրվեց այսպէս կոչված «Սահմանադիր ժողով»:

Ապա լրագիրը, կենտրոնական ժողովը համարելով գործիք ռեակցիայի, այն կարծիքն է յայտնում, որ

Դաշնակցութիւնը իր սահմանադիր ժողովով, հրապարակ եկաւ իր հակայեղափոխական ամբողջ բնոյթով:

Հետևապէս նա, իբրև հասարակական տարբեր մասսաների մի կօնգլօմերատ... հրապարակ եկաւ մանր բուրժուական լօզունգներով և ահա այստեղից էլ սկսվեց Դաշնակցութեան կազմալուծումը... հասարակական մասսաների դիֆֆերենցիացիան:

Իսկ սօցիալ-դեմօկրատների անողոք քննադատութեան ազդեցութեան տակ հայկական ճահճացած կեանքը սկսեց շարժվել և շերտաւորութիւնը սկսեց արագ առաջ գնալ:

1907 Թւականում պայքարը պէտք է սաստկանայ և, «Հոսանքի» ասելով,

Սօցիալ-դեմօկրատների դերը իր յետագայ գործունէութեան մէջ պէտք է կայանայ այդ պայքարի սրման ու ուժեղացման մէջ:

*

Ինչպէս յայտնի է, բանւորական հարցի առիթով նոր խորհրդակցութիւն է կազմել կառավարութիւնը: Սակայն այդ խորհրդակցութեան գործունէութեան վրա ոչ մի վստահութիւն լինել չէ կարող: Մայրաքաղաքի մա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԱԹԱԽՄԱՆ ԵՐԵԿՈՆ

—Մայրիկ, այսօր ձու կը ներկե՞նք,—երեխեքը Ջրօրհնէքը շփոթում էին Ջատկի հետ.—չէ՞ որ այդ երկու օրն էլ «փլաւ» են եփում.—ասում էին:—Էս էլ պստի Ջատիկն է:

—Չէ, բալէս, չէ, այսօր Ջատիկը չէ, Ջրօրհնէքն է:

—Հա՞մա,—գլխի էր ընկնում փոքրիկներից մէկը,—բաս մենակ փլաւ կեփենք, էլի: Ես էլ իմացայ Թէ ձու էլ կը ներկենք:

—Փլաւ եփե՞նք, մայրիկ,—կրկնում էին երեխեքը, երբ տեսնում էին, որ մայրը անպատասխան է Թողնում իրանց հարցը: Ու վրա էին ընկնում, գրկում, փաթթվում.

—Մայրիկ ջան, մայրիկ ջան...

Ցետոյ նորից,

—Փլաւ կեփե՞նք, մայրիկ...

—Կեփենք, բալէքս, կեփենք,—ասում էր վերջապէս մայրը և խորունկ հոգոց հանում:

—Բաս ինչու կրակ չես անում:

Առաջ նրանք ասում էին.

—Դէհ, վեր կաց, Թոնիրը վառիր.—բայց այժմ արդէն սովորել էին, որ այստեղ Թոնիր չը կայ:

Թոնիրը այնտեղ էր մնացել, հեռու, ուր առաջ նրանք ապրում էին. ինչ լաւ էր է. քնից վեր կը կենային Թէ չէ՝ վազ կը տային ու մինչև մարմնի կէսը կը խրվէին Թոնրի մէջ. տաք: Դուրսը բուք, բորան, ցամին—վըզ հա վըզ. չէին մրսում: Այստեղ ցուրտ է, Թոնիր չը կայ. օջախ կայ. էն էլ ինչ. մինչև ձեռքերդ տաքացնում ես—կրակը պրծնում է:

Այնտեղ, հա, այնտեղ շատ բաներ կային: Թալա կար, մէջը տաւար էր կապած. Խշտօն, Բաշօն—եզներն էին. Թուխօն, Մարանը—կովերը. յետոյ՝ հորթերը, հաւերը Թառերի վրա, իսկ դրան եաև՝ «չօլախ» էշը:

Հայրիկն էլ միշտ տանն էր. ձեռին մի բան կը լինէր, կը շինէր, պարապ չէր նստի: Ձմեռը նա տեղ չէր գնում: Ամառը, հա, կը գնար, երկու ամսով, երեքով տուն չէր գայ: Հիմա պէտք է քաղաքից Թուղթ գար, նամակ գար, կամ փող գար, որ հայրիկը տնից դուրս գնար. այն էլ՝ ամիսը, երկու ամիսը մի անգամ հազիւ պատահէր:

Նամակն ու փողը Գրիգորն էր ուղարկում, երեխեքի մեծ եղբայրը: Նա քանի տարի էր, որ գնացել էր. • Նա շուտ-շուտ չէր կարողանում փող ուղարկել: Ամեն չարած հայրիկը նրան գրում էր. «Շուտ, շուտ փող ուղարկիր, Գրիգոր, հացի տամ, հարկը տամ, տաւարին կեր առնեմ...»: Գրիգորն էլ գրում էր. «Որ հացին փող պէտք է տաս, խոտին դարմանին փող պէտք է տաս, էլ ինչ ես կալել այդ երկու կտոր չոր հողին, Թող արի այստեղ. հագիր այստեղ ամեն բան առնովի է»: Բայց փող ուղարկում էր. քիչ էր ուղարկում, բայց ուղարկում էր: Ասենք բանը հաշւում էր, ինքն առնում էր քսան մանէթ ամիսը, ութն ուտում էր, երկուսը տան քրէհ էր տալիս, տասն էլ տուն էր ուղարկում:

Մէկ էլ՝ մի քանի ամիս չուղարկեց. նամակ եկաւ, Թէ Թիֆլիսում «բօնթ» կայ, «զաբաստօվկա» է, զաւօդները չեն բանում, Գրիգորը պարապ է մնացել... Սրա վրա տուեց հայի ու Թուրքի կռիւը: Հայն ու Թուրք իրար ճամբայ չէին տալիս, իրար վրա ապրանք չէին ծախում, գնալ գալ չը կար: Եթէ գիւղում Թուրք էր պատահում՝ բռնում ծեծում էին: Նրանք էլ հայերին էին այդպէս անում: Հայը Թանգացաւ, խոտ, դարման, չէր ճարվում, փող խօմ չը կար ու չը կար: Հայրիկն մի քանի մանեթ «նոխաս» ունէր Թուրքերի գիւղերում, որ ամառվանից էր մնացել, հիմա վախենում էր գնալ հաւաքել:

Վերջը սիրտ արաւ, գնաց եկաւ մի քանի անգամ: Մի անգամ էլ գնաց ու...

Այս վերջին գնալը լաւ յիշում էին երեխեքը: Մայրիկն ասում էր.

—Մի գնա, աչքս խաղում է, վատ երազ եմ տեսել...

—Կնիկ, սուտ բան է վատ երազը. դու վատ մարդն ասա:

—Թուրքերին հոգի կա՞յ:

—Չէ, կայ, կնիկ, նրանք նամարդ չեն:

—Բռնում-չարչարում են:

—Կան Ջանէլ-Ջեալ, Մեհրոնք չէն անում: Կիրակոսի ինագը Մարկոսից են հանում: Բաքու հայերին ջարդել են. այստեղի Թուրքերն ինչով են մեղաւոր: Գնացէք ջարդողներին ջարդէք: Սա ինչ Թաժիբ է:

Գնաց ու չեկաւ. ինչպէս սկսվեց խառնակութիւնը—ոչ ոք իրան պարզ հաշիւ չէր տալիս: Թուրքերն առաջինը եղան,—ասում էին հայերը. հայերը պատճառ տուին,—ասում էին Թուրքերը: Մի տեղ սրանք էին վրա տալիս, միւս տեղ՝ նրանք: Շատ փոքրիկները, մէկը չորս տարեկան, միւս սրանից երկու տարով մեծ, երկուսն էլ աղջիկ, չը գիտէին, Թէ հայրիկն ինչ եղաւ. Նրանք կարծում էին, Թէ նա կը գայ դեռ: Մեծը, ինը տարեկան Արամը, գիտէր, որ հայրիկին Թուրքերը սպանել են, և հասկանում էր՝ ինչ է նշանակում այդ: Երբ փոքրիկները, յանկարծ մտաբերելով հայրիկին, հարցնում էին.

—Մայրիկ, բաս հայրիկը ե՞րբ կը գայ:

Մայրը նկատում էր փոքրիկների պէլլացած, չռւարած աչքերը, գողունի սրբում էր արտասուքը և նկատում Արամին.

—Կը գայ հայրիկը, բալէքս, կը գայ:

—Բաս ինչու չէ գալիս. Դոնէ այսօր գայ,—անցնում էր երեխեքի մտքով: Ինչքան որ փլաւ եփէին՝ հայրիկը տանը կը լինէր. Թէ քաղաք էլ գնար՝ շուտ կը գար: Մէկ փլաւ եփում են Ջատկին, մէկ՝ միւս Ջատկին (պստի Ջատկին և ջօջ Ջատկին) մէկ... Եւ երեխեքը սկսեցին հաշւել տեսնել, Թէ երբ են փլաւ եփում: Ցետոյ՝ ինչ փլաւ. երեխեքը խօս բրինձը չեն ուտում: Մենակ բրնձից եփած փլաւ շատ են կերել: Բրնձի հետ չամիչ է լինում, չիր, մայրիկը պղնձի տակը ձուածեղ է քցում, որը այնպէս կարմրում-փթթում է վարդի նման, ու էսպէս պատրաստ ռր բռում է...

Արամն ասում էր.

—Ես ջօջ եմ, ձեզ նման չեմ, որ չամիչները ջոկեմ, բրինձը Թողնեմ:

—Հալա մի խօսա,—նկատում էին նրան.—դու չէի՞ր, որ հերու Ջատկին լաց էիր լինում չամիչների համար:

—Էն հերու էր...

—Էս էլ էս տարի է...

Երեխեքի խօսակցութիւնը սուր սլաքների նման խոցոտում էր նրանց մօր սիրտը: Նա իր ցաւի մէջ կծկվում, գալարվում էր:

Ի՞նչ անէր, ինչ խօսէր. լաւ էր, ատամները սեղմած: Կուզեր արտասուել, բայց գիտէր, որ երեխեքը չէին դիմանալ, և նրանց «ազիզ» օրը հարամ կը դառնար: Բայց ինչ «ազիզ» օր:

Այն օրից, որ ամուսինը սպանվեց, նրանք տեղափոխվեցին այստեղ և մեծ քաղաքի շէնքերից մէկի ներքնայարկում իբր Թէ տեղաւորվեցին: Սա ինչ բնակարան է... Դեռնի մէջ, խոնաւ, ներքևը ջուր, վերևը՝ ջուր, չորս բոլորը՝ ջուր: Արև չը կայ, օդ չը կայ, լոյս չը կայ: Տունը բակ չունի: Դարման կանչի երեխ չը տեսան, խաղալու տեղ չը կայ երեխեքի համար: Թաղի իրաւունք էլ չը կայ:

Գրիգորը հալից ընկել է աշխատելով, խեղճ տղան: Աւելորդ կօպէկ չի մնում. ինչ առնում է՝ տալիս են ցամաք հացի, նաւթի, լուցկու, մի քիչ չորի, ռոմանթանի:

Կիրակի օրերը պատահում է մէս գնել: Այսօր տօն է, ճրագալոյց, մարդ չը կայ, որ պատրաստութիւն չը տեսնի: Բոլորը տուն են կրում տեսակ-տեսակ ուտելեղէններ: Երեխեքը բակն են դուրս գալիս, հարևանների երեխեքից լսում-իմանում են, Թէ ինչ օր է: Այդ մատաղչների պատասխանը պէտք է տալ: Նրանց չէ կարելի զրկել. առանց այն էլ զրկված են. հայրը մեռաւ, որբ են, երեխմունքի մնացած:

Կայ, որտեղից: Փոքր, բայց չէն գիւղը չէ, որ առաւօտից մինչև երեկոյ հարիւր մարդ ցաւեր հասնի. մէկը իւղ կուղարկէր, միւսը՝ բրինձ, երրորդը՝ ձու, ձուկ, պանիր. չեղած տեղից բան կը լինէր: Այստեղ, որ մեռնես, վրադ ուշ դարձնող չի լինի: Մեծ քաղաք է, բայց մարդկանց սրտերը փոքր են: Ո՞վ կայ հարազատ, բարեկամ, հարևան. բոլորը օտար են, խորթ:

Այսօր լաց լինելու օր չէ. չը պէտք է արտասուել: Թող արտասուքի աղին կուտակվի սրտում և դաղէ, այրէ նրան:

Եւ նա անշարժ նստած էր տեղում, «մանածը» ձեռքին իբր Թէ աշխատում էր: Բայց աչքը դռանն էր յառած. նա սպասում էր Գրիգորին: Գրիգորը պէտք է աւարտէր աշխատանքը, ստանար ռռճիկը, գնէր ինչ որ հարկաւոր էր: Նա ասաց, որ այսօր իրանց ժամը 2-ից կարձակեն, բայց հիմա 4-ն է, շուտով լաւ կը մթնի: Մի երկու ժամից յետոյ ամեն տեղ մարդիկ կը բոլորվեն Թաթախման սեղանի շուրջը, ուրախ և զուարթ:

—Նրանց փայ բաժին է եղել աշխարհի վայելքն ու ճոխութիւնը, փարթամ հագուստեղէնն և ընտիր կերակուրները. Թող Աստուած այսօր մեզ անցեալում մեր ունեցածի, տեսածի ամենապակաս մասը տայ,—մտածում էր նա,—մենք գոհ կը լինենք. միայն այսօր, միայն այսօր... Ուրիշին չենք ուզում:

Ե՞րբ կը գայ Գրիգորը. էլ չուշ նմը. Հիմա ծրտեղ է. գույէ տուն մտնի հէնց այս րօպէին: Գրիգոր, գրիգոր, շուտ արի էլի, անճար:

—Մայրիկ, դէհ, վեր կաց,—կրկին բոլորում էին նրան փոքրիկները:

—Հա, բալէքս, վեր կը կենամ. քիչ էլ համբերէք, մանածը պրծնեմ...

—Է՛, է՛, ե՞րբ կը պրծնես:

—Հիմի կը պրծնեմ. մինչև Գրիգորը գայ, ես էլ կը պրծնեմ...

—Բաս բրինձ չը կայ էլի...

—Դու ջուրը տաքացրու, մինչև Գրիգորը բրինձը բերի:

—Պղինձը բերեմ, մայրիկ...

—Գնամ ջրի, մայրիկ...

Մոլորված կինը մի քանի պտոյտներ տուեց սենեակի մէջ, իսկ երեխեքը՝ նրա հետ, փէշերից կախ ընկած:

Ու մի խորունկ հոգոց հանեց, աչքը դէպի դուռը դարձնելով:

—Հիմա Գրիգորը կը գայ...

Քիչ էլ այդպէս որ տուէր, նա կուշաթափվէր, բայց վերջին խօսքի հետ ուղիղ որ Գրիգորն եկաւ:

—Ջուր կտրաւ աչքս, հազիւ տուն եկար,—հառաչեց մայրը:

—Ի՞նչ անեմ, մայրիկ, խազէյինս սպասել տուեց. հինգ մանէթ պէտք է տար ընդամենը-երկու ժամից աւել սպասել տուեց: Ասում էր չունեմ:

—Վայ, աշխարհը փուլ գայ այդպիսի անշինքեար մարդու գլխին. բաս էս ազիզ օրին մարդու հալալ աշխատանքը կուշացնեն տալ:

—Դէհ, ինչ արած. ինչ ունիս անելու՝ արա:

Փոքրիկները, բոլորովին ուրախացած, ցատկոտում էին:

—Ջան, Ջատիկն է, փլաւ կուտենք, ջան, ջան...

Վ. Պետրոսեան

մուլն այն կարծիքն է յայտնում, որ Դուման միայն կարող է լուծել այդ հարցը։ Այդ առթիւ «Товарищъ» լրագիրը նկատում է.

Եթէ, որ ֆինանսների մինիստրութեան սպիտակ դահլիճի պատերը, կարող լինէին այս վերջին 3 տարվայ ընթացքում բանւորական հարցի մասին արտասանված բոլոր ճառերը, որ նրանք լսել են, արտասանել այժմ և պատկերացնել նոյն ժամանակներում տեղի ունեցած անթիւ նիստերի պատկերները, երևի, մեր հասարակական և պատմութեան կեանքի մի բնորոշ էջը կը կազմէր։ Այնքան մարդիկ, այնքան ուժեր, այնքան խօսքեր... այնքան փողեր ու ժամանակ վատնել... բայց հետևանքը շատ քիչ։

ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այսօրվանից կը սկսվի Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցող անձանց հասցէների արտագրութիւնը՝ ծրարները ընտրողներին ուղարկելու համար։

Պետական Դումայի ընտրութիւնների նահանգական մասնաժողովը ստացել է 665 գանգատաթղթեր՝ Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցողների ցուցակից բաց թողնված անձանց վերաբերեալ։

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրաւիրել է 50 ինտելլիգենտ գործադրողներ՝ Պետական Դումայի ընտրողների ցուցակները կազմելու աշխատանքները կատարելու համար։ Նրանք զբաղվելու են ընտրողներին ուղարկվող ծանուցագրերը կազմելով և պէտք է աշխատանքները վերջացնեն 5 օրվայ ընթացքում։

ԿԱՏԱՐԵՑԷՔ ՁԵՐ ՊԱՐՏՔԸ

Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակը մօտենում է. նրանք նշանակված են Թիֆլիսում՝ յունվարի 27 ին, իսկ գաւառում յունվարի 21-ին։

Ընտրողական ցուցակների հրատարակութիւնը վերջացաւ արդէն։ Այժմ մնում է, որ ամեն մի քաղաքացի կատարի իր քաղաքացիական պարտականութիւնը։

Ասպարէզի վրա այլ ևս չէն լսվում բօյկոտի մռայլ կանչերը. մոլորեալները յետ դարձան իրանց սխալ ճանապարհից, և այսօր ամենքն են պատրաստվում ընտրութիւնների համար, ամենքն են ուզում իրանց ներկայացուցիչը ունենալ մի տարի առաջ արհամարհանքի առարկայ և որոգայթ համարվող Դումայում։

Մի տարի առաջ Դուման ժողովրդական ներկայացուցչութիւն, պարլամենտ չը ճանաչողները այժմ ընդունում են նրան, հնարաւոր համարելով գործել այնտեղ և օգտակար գործօն դարձնել ժողովրդի համար։

Դեռ անցեալ տարվայ ընտրութիւններին հայ ժողովրդի մէջ լսվում էին զգաստացուցիչ ձայներ. նրանք հրաւէր էին կարդում հայ քաղաքացիներին չը լսել ինքնասպանութեան ու պարտազանցութեան կոչ անող բօյկոտական քարոզներին։ Եւ եթէ հայ ժողովուրդը ունեցաւ իր ներկայացուցիչները առաջին Դումայում, միմիայն այդ հեռատես ու զգաստ հասարակական գործիչներին ենք պարտական։

Մեր առաջ այժմ էլ երկրորդ Դումայի ընտրութիւններն են. բօյկոտի կանչեր չը կան այլ ևս, և ամենքն էլ հրաւէր են կարդում մասնակցել ընտրութիւններին։ Անշուշտ ամեն մի քաղաքացի կաշխատէ օգտվել իր ձայնի իրաւունքից և տալ իր քուէն։

Սակայն ընտրողների համար այժմ կայ մի ուրիշ աւելի կարեւոր հարց. ո՞ւմ տալ իրանց ձայնը, իրանց վստահութեան քուէն։

Անհրաժեշտ է լուրջ մտածել այդ հարցի մասին, լաւ կշռադատել նախ քան քուէ տալը, որովհետև վստահութեան քուէն մի այնպիսի ուժ է, որ պէտք է գիտակցութիւն տայ այս կամ այն կուսակցութեանը, այս կամ այն տակտիկային, այս կամ այն ձգտումներին ու հասկացողութիւններին։

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ «Մշակի» համակրութիւնը հայ դեմոկրատական կուսակցութեան կողմն է։ Այդ կուսակցութիւնը թէև նոր է կազմակերպված, բայց նա, բղխած լինելով մեր ազգի իրականութիւնից, իբրև կեանքի անհրաժեշտութիւն, համախմբել է իր շուրջը հասարակական յայտնի ուժեր ու գործիչներ, որոնց անցեալն ու ներկան լաւ յայտնի է։ Այդ կուսակցութիւնը, որ իր ծրագրով համապատասխանում է ժողովրդական ազատութեան և նրա հետ էլ համերաշխութեամբ գործում է, աշխատում է բաւարարութիւն տալ հայ ժողովրդի ամենալայն խաւերին, առաջադրում է այն պահանջները, ինչ որ հնարաւոր է ստանալ ներկայումս։ Նա ձգտում է ստեղծել քաղաքական այնպիսի արդար կարգեր, որոնք կարողանային կանոնաւորել դասակարգային յարաբերութիւնները և ապահովել փոքրամասնութեան իրաւունքները, առանց զիջավարվելու նեղ կուսակցական դիտումներով։

Եւ միանգամայն համոզված ենք, որ հայ ժողովուրդը տալով իր քուէն, իր համակրանքն ու վստահութիւնը Հայ Դեմոկրատական կուսակցութեան՝ սխալված չի լինիլ։ Կատարեցէք, ուրեմն, ձեր պարտքը։

Աշխատակից

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ի նկատի ունենալով Պետական Դումայի ընտրութիւնների մօտենալը, մերձբալթեան գեներալ-նահանգապետ բարոն Մէլլէր Զակոմելսկին, ինչպէս հաղորդում են, առանձին ուշադրութիւն է դարձրել միջոցներ ձեռք առնելու միանգամայն չեզոքացնելու ձախակողմեան ծայրայեղ կուսակցութիւնների քաղաքական գործունէութիւնը։ Ամեն տեսակ հաւաքոյթներ և ժողովներ, ուր կարելի է խօսել Պետական Դումայի ընտրութիւնների պէս-պէս հարցերի մասին, արգելվում են։ Միաժամանակ միջոցներ են ձեռք առնվում հսկելու քաղաքական կուսակցութիւնների վրա՝ նրանց գաղտնի ժողովները արգելելու մասին։

(«Б. В.»)

Ինչպէս լսել է «Новая Газета»-ն, վերջին տեղեկութիւնների համաձայն, Պետերբուրգում սահմանադիր-ռամկավարների՝ աւելի ձախ կանգնած կուսակցութիւնների հետ համաձայնութիւն կազմելու հարցը մօտ է դրական լուծման։ Բանակցութիւնները տեղի են ունեցել սահմանադիր-ռամկավարների լիդեր Ն. Ն. Միլիւկովի և ժողովրդա-սօցիալիստական կուսակցութեան ներկայացուցիչների միջև։ Վերջինները պահանջում են, որ 6 տեղերից 4-ը կադէտներին չը զիջվի։ Ըստ երևոյթին, համաձայնութիւնը կը կայանայ այն պայմանով, որ երեք տեղը տրվի կադէտների թեկնածուներին, երեքը՝ ոչ կադէտներին։ Երկու կողմերն էլ համաձայն են պատգամաւորական տեղերից մէկը տալ բանւորի, որով սահմանադիր-ռամկավարները ցանկութիւն են յայտնում, որպէսզի այդ վերջինն անկուսակցական լինի։ Սահմանադիր ռամկավարների համար իբրև ցանկալի թեկնածու լիդերները մատնանշել են Ն. Ֆ. Աննէնսկուն։

—

«Русь»-ը հաղորդում է Ցարսկոյէ Սելոյից եկած մի բարձրաստիճան անձնաւորութեան խօսքերը, որ բարձր շրջաններում դադարել են հաւատալ, որ այժմեան կաբինէտին կաջողվի Դումա մտցնել հակակառավարականներին։ Սրանով մատնանշում են ռէակցիայի ցանկալի թուլանալը։

—

«Рѣчь»-ը հաղորդում է, որ Պետերբուրգի ընտրողների ցուցակում մտցրած է շատ ոստիկանների և գաղտնի պահնորդութեան գործակալների ազգանուններ։

—

«Молодая Жизнь»-ը հաղորդում է, որ կադէտները խորհում են խաղաղ վերանորոգչականների հետ համաձայնութիւն կապելու մասին։

—

Պետերբուրգի նահանգի բանւորների լիազօրների համագումարը նշանակված է յունվարի 25 ին։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

II

Ազգային Երեսփոխական Ժողովի փոքր ի շատէ կանոնաւոր վերջին նիստը գումարվել է 1894 ին, երբ դեռ հայկական կոտորածները չէին սկսվել։ Ես առիթ եմ ունեցել ներկայ լինել այդ նիստին։ Ժողովը գումարվեց Մայր Եկեղեցում (Պատրիարքարանին կից)։ Ատենադպիրն էր Գաբրիէլ Նորատունկեան։ Այդ ժողովումն էր, որ Իզմիրլեան ընտրվեց Մատթէոս եպիսկոպոսը՝ պատրիարք Թիւրքիայի հայոց։ Երեսփոխաններից ոմանք դեռևս համարձակվում էին ազգային այս կամ այն հարցի մասին ձայն բարձրացնել և բացատրութիւններ պահանջել պատրիարքական տեղապահից, որ այն միջոցին Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան էր։ 1894-ից յետոյ Թիւրքահայերը սոսկալի ճգնաժամեր ունեցան թէ Կ. Պոլսում և թէ գաւառներում։ Կանխօրէն մտածված ծրագրով 1895 ին և 1896-ին տեղի ունեցան յայտնի կոտորածները. էլ ոչ վարչութիւն, ոչ էլ պատրիարք կարող էր պաշտօնավարել։ Իզմիրլեան աքսորվեց Երուսաղէմ իբրև յեղափոխական շարժման կուսակից։ Ազգային վարչութիւնը դատալից էր եղած. ամբողջ ազգը թաւալվում էր արեան մէջ։ Այդ միջոցին էր, որ Կ. Պոլսի հայութեան բոլոր խաւերի բարձր ներկայացուցիչները խորին հպատակութեան խոնարհական զգացմունքով լի մի աղերսագիր ներկայացրին սուլթան Համիդին՝ առաջնորդութեամբ արտաքին գործերի մինիստրի օգնական Տատեան Արթին փաշայի։ Այս խոնարհ ուղերձից յետոյ միայն սուլթանը զայրոյթն իբրև թէ իջաւ և Տատեան յաջողեցաւ իրաւունք ստանալ նոր Ազգային Ժողով գումարելու, որպէսզի պատրիարքի և պաշտօնական վարչական մարմինների նոր ընտրութիւն կատարվի։ Այս նոր Երեսփոխանական Ժողովում, 1896 թ. նոյեմբերի 8-ին, ընտրվեց Մաղաքիա եպիսկ. Օրմանեան պատրիարք։ Ընտրվեցին Քաղաքական Ժողովի նոր անդամներ, մեծ մասը կառավարութեան բարձր պաշտօնեաներից, սկսած նոյն ինքն Արթին փաշա Տատեանից։ Բայց սուլթանը գոհ չէր դեռ։ Նա պահանջում էր հայոց Սահմանադրութեան վերաքննութիւնը, որ նշանակում էր հայոց արտօնութիւնների սահմանափակումը։ Սուլթանը չէր կարողանում տանել, որ հայերը սահմանադրական օրէնքներով կառավարեն իրանց ներքին, ազգային, դպրոցական և կրօնական գործերն, այն ժամանակ, երբ ինքը տապալել էր օսմանեան պետական սահմանադրութիւնը։ Ուստի նա պահանջում էր Օրմանեան պատրիարքից և Տատեանից, որ քաղաքական ժողովի ատենապետ էր ընտրվել, մեծ յապաւումներ անել Սահմանադրութեան կանոնագրի մէջ։ Օրմանեան չէր կարող հակառակվել այս բարբարոսագոյն պահանջման և ահա ընտրվեց «Վերաքննիչ Մասնաժողով» Սահմանադրութիւնը կրճատելու։ Ի պատիւ Օրմանեանի պէտք է ասել, որ նա այս կամ այն պատրուակով կարողացաւ այս «վերաքննութիւնը» մեռած տառ թողնել. ահա 10 տարի է, որ կը վերաքննուի, բայց Սահմանադրութիւնը մնում է անփոփոխ և Օրմանեան կարող է պարծենալ, որ ինչպէս ինք ընդունեց և ուխտեց անխախտ պահել, այնպէս էլ կը թողնի իր յաջորդին։ Միակ զիջումն այն եղաւ, որ Ազգային Ժողովի գումարումը յետաձգվեց անորոշ ժամանակով և «Սահմանադրութիւն» բառը արտաքսվեց հայ թերթերից և պաշտօնական թղթերից, բայց նրա բոլոր օրէնքները՝ գոնէ ըստ էութեան դեռ պահում են իրանց ուժը։

1896-ին ընտրված Քաղաքական և Կրօնական ժողովների անդամների մեծ մասը այս 10 տարվայ ընթացքում պակասել էր. ոմանք մեռել էին, ոմանք հեռացել։ Պատրիարքարանի գործունէութիւնը ջլատված էր այդ պատճառով։ Երկար և անընդհատ ջանքերից յետոյ վերջապէս Օրմանեան յաջողեց սուլթանից իրաւունք ձեռք բերել նորից «Ազգային Ժողով» գումարելու։ Բայց ինչ մեծ տարբերութիւն 1894-ի Ազգային Ժողովի և 1906-ինի մէջ։ Հաւաքվել են միայն կենդանի մնացած և Կ. Պոլսում ներկայ գտնվող «ազգային երեսփոխանները», նիստ են գումարել ոչ թէ հանդիսաւորապէս, ոչ թէ Մայր Եկեղեցում, այլ պատրիարքարանի դահլիճում, այն էլ ոչ թէ իբրև «Ազգային Ժողով», այլ իբր թէ Օրմանեան պատրիարքի տօնը շնորհաւորելու համար են հաւաքվել։ Այդ պայմանով միայն կառավարութիւնը թոյլ է տուել գումարվել և ընտրութիւն կատարել։ Թէև կիսատ, թէև պակասաւոր, թէև գաղտագողի, այնուամենայնիւ «Ազգային Ժողովը» գումարվեց և Սահմանադրութեան պահանջած ձևակերպութիւնը կատարելով մի անգամ ևս ցոյց տուեց, թէ Թիւրքիայի հայոց «Ազգային Սահմանադրութիւնը» այն հիմն է, որի վրա կանգնում և գործում են դեռևս ազգային պաշտօնական մարմինները։

Ազգային Ժողովը մի կարևոր քայլ է առել. թէև կառավարութեան կողմից թոյլատրված էր միայն ընտրել «պակասած» անդամների տեղ նորերին, բայց Ժողովը, ի նկատի առնելով մնացածների էլ անյարմարութիւնները, որոշել է բոլորովին նոր ընտրութիւն կատարել և վարչութեան ղեկը յանձնել աւելի վստահելի նոր անձերի։ Այդպէս էլ եղել է։ Բայց այն եկեղեցական և աշխարհական անձերն, որոնք այդ ձևով դուրս են վանվել վարչութիւնից, սկսել են ինտրիգներ սարքել և աշխատել, որ կառավարութիւնը չը հաստատէ, «քանի որ ոչ թէ պակասածների տեղն է լրացված, այլ բոլորովին նոր ընտրութիւն է կատարված»։ Երկար տատանումներից յետոյ վերջապէս Օրմանեան պատրիարք կարողացաւ յաղթել բոլոր արգելքներին և ստացաւ ընտրութիւնների հաստատութիւնը և 1906 ի սեպտեմբերի 20 ին նորակազմ վարչութիւնն իր առաջին նիստը գումարեց պատրիարքի նախագահութեան տակ։

Ի նկատի ունենալով, որ Կ. Պոլսի հայոց այս Ազգային վարչութիւնը մեծ դեր է խաղում բոլոր Թիւրքահայոց ազգային հասարակական կեանքում, աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ անունները վարչութեան նորընտիր անդամների, որոնց մի քանիսի հետ անձամբ ծանօթ եմ, իւրաքանչիւրի մասին մի քանի համառօտ կենսագրական տեղեկութիւններ տալով։

Ա. Քաղաքական ժողով

1. Գաբրիէլ Նորատունկեան. — արտաքին գործերի մինիստրութեան խորհրդական. նշանաւոր իրաւաբան։ Շատ կորեկտ մարդ է, կարողանում է իր ազգասէրի համբաւը անաղարտ պահել՝ պետական հաւատարիմ պաշտօնեայ մնալով։ Առիթ եմ ունեցել իր հետ տեսնվել 1904-ին Կ. Պոլսում, իր ամարանոցում։ Շրջահայեաց և խելօք մարդու տպաւորութիւն է թողնում։ Երկար տարիներից ի վեր ազգային վարչութեան անդամ և նախագահ է եղել. Անդամ է նաև Սանասարեան վարժարանի հոգաբարձութեան և Իզմիրեանցի Դրամական Յանձնաժողովի։ Նոր վարչութեան մէջ ամենից փորձված և ամենից ազդեցիկ անձն է։ Ընտրված է վարչութեան ատենապետ։ Նա այս անգամ ուղարկել է իր հրաժարականը, բայց թէ պատրիարքն և թէ ժողովը չեն ընդունել և խնդրել են մնալ։

2. Սեպուհ Մագսուտ.—Յայտնի դրամատէր, կալուածատէր և բանկիր։ Ազգային պաշտօնական մարմինների գրեթէ չէ մասնակցել մինչև հիմա։ Չեմ կարծում, թէ եռանդուն մասնակցութիւն ունենայ ազգային գործերում։ Կարող է օգտակար լինել իբրև կազմակերպող ի նպաստ ազգային հիմնարկութիւնների տրված հանգանակութիւններում, շնորհիւ իր դիրքի իբրև դրամատէր։

3. Յարութիւն Ասլանեան.—Ծանօթացած եմ Օրմանեան պատրիարքի մօտ, որի հետ շատ մօտ է։ Վաճառական է։ Վերջին 6—7 տարիներում հարստացել է իբրև կապալառու ծովային մինիստրութեան։ Եռանդուն կերպով մասնակցել է ազգային բարեգործական գործերին և հիմա էլ Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան մէջ անդամ է։

4. Գէորգ Ասլանեան.—Ճարտարապետ։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան մէջ բարձրագոյն պաշտօնեայ. երկար տարիներից ի վեր մասնակցել է ազգային կրթական գործերի. հեղինակ է գիտական դասագրքերի։ Վերջին անգամ անտեսական խորհրդի ատենապետ էր. այժմ էլ անդամ է Սանասարեան խնամակալութեան։ Յարգված անձ է։

5. Վահան Սուրէնեան.—Հանքային երկրաչափ. պետական պաշտօնեայ, անդամ էր նախկին Տնտեսական Խորհրդի։

6. Տիրան Աչնան.—Իրաւաբան, նահանգական դատարանի անդամ։ Առաջին անգամ է որ ազգ. հաստատութեան մէջ պաշտօն է ընդունում։

7. Տ. Աճէմեան.—Յայտնի ակնաբոյժ, մասնակցել է կրթական գործերի. նախկին ուսումնական խորհրդի ատենապետն էր։

8. Մինրան Սէֆեան.—Վաճառական, ֆինանսիստ։ Երկար տարիներից ի վեր մասնակցել է պատրիարքարանի գործերում, մանաւանդ ֆինանսական հարցերում։ Անդամ է և եղել Քաղաքական Ժողովի։ Եղել է ատենապետ Տնտեսական Խորհրդի։

9. Մկրտիչ Ասաթեան.—Փաստաբան է և ուրիշ անգամ դարձեալ եղել է Քաղաքական Ժողովի անդամ։

10 Արշակ Դաբաղեան.—Յայտնի դրամատէր, բանկիր. անդամ է Սանասարեան դպրոցի խնամակալութեան։

11. Տիգրան Թօքատեան.—Վաճառական։ Գործնական մարդու համբաւ ունի. մասնակցել է զանազան ազգային գործերի։

12. Տիգրան Մանուկեան.—Յայտնի վաճառական, որ մեծապէս յարգված է, շնորհիւ Ազգային Հիւանդանոցի բարեկարգութեան մէջ ունեցած չքնաղ մասնակցութեան։ Այժմ էլ Հիւանդանոցի հոգաբարձութեան ատենապետ է, երբ նախկին ատենապետ Պատրիկ Կիւլպէկեան Կ. Պոլսից բոլորովին հեռանալով թողեց իր այդ պաշտօնը։

13. Հմայեակ Սէֆերեան.—Արքունի պաշտօնեայ. սուլթանի անձնական երկրորդ թարգմանն է այժմ, իր եղբօր Նշան Սէֆերեանի մահվանից յետոյ։—Իր այդ փափուկ և բարձր պաշտօնի շնորհիւ բաւական ազդեցիկ անձ է։

Քաղաքական ժողովի Ա. ատենապետն է Գաբր. Նորատունկեան, իսկ Բ. ատենապետն Տիրան Աչնան։ Այժմ այս վերջինը մեծ դեր է կատարում Նորատունկեանի հրաժարման պատճառով։

Կրօնական ժողովի նորընտիր անդամներն են—5 եպիսկոպոս (Դր. Յովհաննիսեան, Վահրամ Մանկունի, Մեսրոպ Սուքիասեան և Գաբր. Ճէվահիրճեան և Մովսէս Կէօմիւրճեան), 2 վարդապետ և 7 քահանայ։

Կրօնական ժողովի Ա. ատենապետն է Սուքիասեան և Բ. ատենապետը Մանկունի։ Սուքիասեան՝ Ադրիանապոլսի նախկին առաջնորդն է, որ Իզմիրլեանի պատրիարքութեան ժամանակ նրան հակառակ է վարված և այս պատճառով էլ պալատի persona grata ն է։ Մանկունին էլ Թիւրքիա տեղափոխվելուց ի վեր միշտ մասնակցել է թէ եկեղեցական դասական պաշտօնների և թէ լրագրական հրատարակութիւնների՝ մանաւանդ Էջմիածնի մասին։

Քաղաքական և Կրօնական ժողովներ երբ միասին նիստ են գումարում, կազմում են «Խառն ժողով» որը և կոչվում է «Ազգային վարչութիւն»։ Խառն ժողովի նիստերին նախագահում է պատրիարքը, իսկ սրա բացակայութեան ժամանակ նրան փոխարինում է Քաղաքական ժողովի ատենապետը և ոչ թէ Կրօնական ժողովի։

Կ. Պոլսի հայ հասարակութիւնը ընդհանրապէս գոհ է վարչութեան այժմեան կազմից, թէև այս 2—3 ամսում նա դեռ որևէ կարևոր գործ չէ կատարած։

Ինչ հանգամանքների մէջ էլ որ գտնվի երկիրն, և որքան էլ սեղմված լինի ազգային սահմանադրութիւնը, այնուամենայնիւ նա մի որոշ ինքնավարութիւն է տալիս Թիւրքիայի հայոց, որոնք բացի քաղաքական գործերից, ուրիշ գրեթէ բոլոր ազգային ներքին հարցերը կարող ինքնուրոյն կերպով տնօրինել։

Ռուսաստանի և Թիւրքիայի քաղաքական կացութիւնն և պետական կազմը մանաւանդ այժմ մեծ տարբերութիւն են ներկայացնում, բայց յամենայն դէպս ռուսահայերը շատ հեռու են այն ներքին գործերի ինքնավարութիւնից, որը վայելում են Թիւրքահայերը։ Իսկ եթէ Թիւրքիան վերականգնէ իր օսմանեան սահմանադրութիւնն և երկրի քաղաքական վիճակը բարուքվի, հայոց ազգային սահմանադրութիւնը անկասկած շատ մեծ զարկ կտայ նրանց զարգացման։

Սարուխան

Թիֆլիս, 28 դեկտեմբերի 1906 թ։

ԲԻՒՐՈԿՐԱՏԻԶՄԸ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Մենք սովորաբար միշտ գանգատվել ու գանգատվում ենք մեր կառավարչական զանազան կարգի հիմնարկութիւններում տիրապետող բիւրոկրատական այն անտանելի կարգերի ու ձևականութիւնների մասին, որ ընդհանուր առմամբ կոչվում են ֆորմալիստիկա և կանցելեարշչինա։ Այդ ընդունված չինովնիկային կարգերը յաճախ այն աստիճան ձանձրալի ու զզուելի են դառնում, որ մարդիկ ամենայն ուրախութեամբ կը հրաժարվէին այդ հիմնարկութիւնների մէջ ոտք դնելուց, եթէ միայն ծայրայեղ կարիքը չը ստիպէր նրանց։ Մի կողմ թողնելով այդ հիմնարկութիւնների միւս պակասաւոր կողմերը, բաւական է ասել միայն այն, որ այդտեղ մտնողը պէտք է յօժարակամ յանձն առնի մի քանի ամբողջ ժամեր վատնել մի քանի կոպէկանոց գործի պատճառով։

Այդպէս են, ասում ենք, մեր բոլոր կառավարչական հիմնարկութիւնները։ Բայց միթէ նոյնը չեն և մեր այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք կառավարութեան ու բիւրոկրատիայի հետ և ոչ մի կապ չունեն, որոնք զուտ հասարակական ու նոյնիսկ մասնաւոր ձեռնարկութիւններ են։ Միթէ օրինակի համար մեր մասնաւոր, ոչ պետական բանկերի հետ մի որևէ գործ ունենալու դժբաղդութիւնն ունեցողները նոյնպէս ստիպված չեն լինում ամբողջ ժամեր կորցնել, սեղանից սեղան շրջելով և իւրաքանչիւր սեղանի առաջ տասնեակ րոպէներ սպասելով, ինչպէս որ այդ լինում է դիցուք մեր պօստային հիմնարկութեան մէջ։ Ի՞նչ տարբերութիւն կայ պօստով մի որևէ կապոց ուղարկելու կամ դիցուք «Փոխադարձ Վարկի Ընկերութեան» բանկից մի որևէ գումարի փոխադրութիւն ստանալու կամ ուղարկելու միջև։ Երկու դէպքումն էլ մարդիկ ստիպված են, ասում ենք, ամբողջ ժամեր կորցնել, և կորցնել յաճախ ոչ թէ նրա համար, որ կլիենտների շատութեան պատճառով ստիպված ես հերթի սպասել, այլ պարզապէս հէնց նրա համար, որ ծառայողը կամ գլուխը քարշ գցած իր տոմարների գրկումն է զբաղված ու քեզ չը տեսնել է ձևանում և կամ թէ, որ աւելի ծաղրալին է, նա ուղղակի իր տեղումը չէ, և դու պէտք է դատարկ սեղանի առաջ սպասես մինչև որ, ով գիտէ որտեղից, մի կէս ժամից յետոյ վերադառնայ։

Այդպիսի անփոյթ ու անտարբեր վերաբերմունք բիւրոկրատական չինովնիկների կողմից, որոնք այն համոզումն ունեն, թէ հասարակութիւնն է կառավարչական հիմնարկութիւնների համար, այլ ոչ ընդհակառակը, դեռ ևս էլի հասկանալի է։ Դա նոյնիսկ մի որոշ չափով տանելի է դառնում, երբ մտածում ես, թէ շուտով, շատ շուտով բիւրոկրատիզմի այդ բոլոր կարգերը պատմութեան կարգը պիտի անցնեն։ Բայց երբ նոյն բիւրոկրատական կարգերն ու չինովնիկութիւնը տիրապետում են և մեր հասարակական բոլոր հիմնարկութիւններում, երբ նկատում ես, որ մեր ազատարական աշխարհն ու նրա հիմնարկութիւններն էլ նոյն չինովնիկների նման ժամանակի գնահատում ասված բանը չեն հասկանում, չեն խնայում իրանց կլիենտներին և ի չարն են գործ դնում հասարակութեան համբերութիւնը, այդ ժամանակ արդէն մարդ ակամայից վհատութեան մէջ է ընկնում, մտածելով թէ բիւրոկրատիայի անհետանալով միթէ կարող է անհետացած լինել և բիւրոկրատիզմը, քանի որ մեր բոլոր ոչ-կառավարչական հիմնարկութիւններն ու նրանց մէջ ծառայողները այն աստիճան վարակված են բիւրոկրատիզմի ոգով, որ կատարեալ չինովնիկների պատկերն են ընդունել։

Մեզ թւում է, որ բիւրոկրատիայից ազատվելը շատ աւելի հեշտ պիտի լինի, քան այն բիւրոկրատիզմից, որը մեր հասարակական հիմնարկութիւնների արեան մէջ է մտել դարերից ի վեր։

Կարիլենա

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(«Հէքեաթ» Շնիցլերի, դրամա 3 արարուածով, և «Վարձու կինը», վօդեվիլ 1 արարուածով, Թարգ. Վերդի)

Երկուշաբթի, յունվարի 1-ին, հայ դրամատիկական խումբը ներկայացրեց Շնիցլերի «Հէքեաթ» դրաման, որ հայկական բեմի վրա խաղացվում էր առաջին անգամ։

Դրամայի գլխաւոր իմաստը հետևեալն է։ Օրիորդ Ֆաննին դժբաղդ հանգամանքների շնորհիւ խաբված է եղել տղամարդուց։ Նրա անունը կոտրվել է, և փեսացուները խորշում են նրանից։ Չէ վստահանում նրա հետ ամուսնանալ նաև երիտասարդ Թէօդոր Դէննէրը, որը ընդհանուր խօսակցութիւնների ժամանակ բողոքում է եղել այն նախապաշարման դէմ, որ կեանքի մի սխալի պատճառով հասարակութիւնը ոտնատակ է տալիս կին մարդու անձնաւորութիւնը։ Օրիորդ Ֆաննին ամեն ճիգ գործ է դնում համոզելու, որ նա զղջացել է իր արածի վրա և ամբողջ էութեամբ սիրում է Թէօդորին, բայց երբ անկարող է լինում նախապաշարմունքի սերմերը դուրս պոկել Թէօդորի ուղեղից, թողնում է բոլորին և հեռանում հայրենի քաղաքից դէպի հեռուները՝ նուիրելու իրան բեմական արհեստին։

Օրիորդ Ֆաննիի դերը կատարում էր դերասանուհի տիկին Մայսուրեան, որի բենեֆիսն տրվում էր պիեսը։ Մայսուրեան հոգեբանօրէն ուսումնասիրել էր իր դերը և աշխատում էր արտայայտել այն բոլոր ելևէջները, որոնցով անցնում է տանջվող և սիրող օրիորդի հոգեկան աշխարհը։ Տիկին Մայսուրեանի խաղը մանաւանդ ուժեղ և տպաւորիչ էր երրորդ գործողութեան մէջ։ Նա գեղեցիկ կերպով ներկայացրեց վիրաւորված և բողոքող սրտի ուժեղ բացականչութիւնը և նրա հերոսական վճիռը՝ յենվել միայն իր սեփական ուժերի վրա, արհամարհելով մարդկանց փոքրոգութիւնը։ Տիկին Մայսուրեանը ամբողջացրել էր Ֆաննիի տիպը և եթէ առաջին գործողութեան մէջ թոյլ տուած չը լինէր մի որոշ աստիճան լալկանութիւն իր ձայնի մէջ, նա կատարեալ կը լինէր այդ տիպի վերարտադրութեան մէջ։ Տիկինը արժանացաւ բուռն ծափահարութիւնների և ստացաւ մի քանի ընծաներ, որոնց թւում և գիպսից պատրաստած իր արձանիկը։

Թէօդորի դերը կատարում էր Զարիֆեան։ Նա ճիշտ էր ըմբռնել տիպը, բայց կատարելապէս չէր իշխում իր դերի վրա, որը, այդ պատճառով, չէր գործում այն ուժեղ տպաւորութիւնը, որ պէտք էր նրանից սպասել, և միայն առանձին մի երկու տեսարաններն էին աջող։

Տիկիններ Վարդուհի, Արաքս, Մելիքեան, Նուրիկեան և Օհանեան իրանց երկրորդական դերերում բաւարար էին։ Նրանցից աւելի աչքի ընկնող դեր ունէր տիկին Նուրիկեան։ Նա լաւ խաղաց, բայց պէտք է աշխատէ ձայնի մէջ մտցնել բազմատեսակ արտայայտութեան ձևեր։

Աբելեան նկարիչ Վիլլի դերում բնորոշ էր, աշխուժով, կենսունակ։

Մանուէլեան Ագուստի դերում ինքնատիպ էր, լաւ գրիմով. նրան աջողվեց ներկայացնել անախորժ, կասկածելի հակումներով մարդու տիպը։ Մանուէլեան առաջադիմում է նկատելի կերպով. նա իւրացնում է խօսակցական ձևի բնորոշ արտասանութիւն, որը առաջ կրում էր չափազանց գրական լեզուի բնաւորութիւն։

Յարութիւնեան Ֆօնֆապելի դերում ներկայացրեց գերմանական մտավախի և միջին մարդու մի տիպ։

Արաքսեան Բերգերի դերը կատարեց բաւարար և թէև մօտեցել էր «շարժին», բայց կարողացաւ որոշ սահմանում կանգ առնել։

Ալոյեան դոկտոր Միլլների դերում բաւարար էր։ Նոյնն էլ կարելի կը լինէր ասել պ. Թաշճեանի մասին, եթէ վերջինս իր ներկայացրած տիպին տուած լինէր աւելի գործավար մարդու բնաւորութիւն, քան չափազանց կոտրվող կաւալերի։ Ազաբեգեան դոկտոր Վիտտէի դերում թոյլ էր, որովհետև արտասանում էր բառերը չափազանց արհեստական կերպով։

Վերջում խաղացին «Վարձու կին» վօդեվիլը, որ ծիծաղեցրեց հանդիսականներին։ Մասնակցողները՝ Աբելեան, Զարիֆեան, Արաքս, Աւետեան և Նուրիկեան՝ աշխուժով խաղացին։

Չենք կարող չարձանագրել, որ հասարակութիւնը վօդեվիլի ժամանակ չափազանց աղմուկ էր հանում և խանգարում լսելու դերասաններին։ Մի քանի մարդիկ էլ թոյլ էին տալիս իրանց անտեղի բացականչութիւններ։ Թատրոնը լիքն էր։

Սիրոզ

—

Առաջիկայ երկուշաբթի օրը կը կայանայ դերասան Յարութիւնեանի բենեֆիսը, կը ներկայացվի Րօստանի «Արծուիկ» դրաման։

ՍԵՒ ԾՈՎԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է

Բաթում, 26 դեկտեմբերի

Առհասարակ բնիկները շարունակ ասում էին, որ Սև Ծովը չէ սիրում որոշ դրութեան մշտական պահպանութիւնն իր ափերի նկատմամբ. սիրում է խաղալ։ Մի որոշ ժամանակ կամաց-կամաց հեռանում է քաղաքից մի կողմից, իսկ ընդհակառակը նորից է մօտենում մի ուրիշ կողմից։ Այսպէս՝ ծովը հետզհետէ նկատելի կերպով հեռանում է քաղաքիս արևմտեան ափից, ուր ձգված է մեր սիրունիկ այգին։ Այսպիսով այգին միջոց ու հնարաւորութիւն ունի ընդարձակելու իր լայնութիւնը։ Սրա հակառակ շատ նկատելի կերպով քերում-մաշում է քաղաքիս հիւսիս-արևմտեան ափերը, ուր կառուցված են զինուորական կլուբը, քաղաքային բանտը և արական փառաւոր գիմնազիոնը։ Զինուորական կլուբն ընդամենը 5—6 տարի հազիւ լինի որ շինված է. ծովը 50 քայլ հեռու էր. այժմ արդէն քանդում է հիմքը. այս շէնքի կործանումն այն աստիճան անխուսափելի է, որ զինուորական վարչութիւնն ինքը վճռել է քանդել վաղօրօք, գոնէ նիւթերն ազատելու նպատակով։

Ծովի ալիքները ուժգին-ուժգին բաղխում են և քաղաքային բանտի պարիսպներին. արդէն զգալի կերպով մաշել են ծովի ափով ձգված պատուարի հիմքերը։ Վտանգը անխուսափելիօրէն սպառնում է և արական գիմնազիոնի հսկայ շէնքին։ Ալիքներն անցեալ անգամ ողողել էին գիմնազիոնի պատերի տակով ձգվող մայթերը, և ջուրը զարկում էր մուտքի դռներին, որով և անհնարին էր դարձնում ելն ու մուտքը այդ կողմից։ Ճարտարապետները լուրջ կերպով զբաղված են գիմնազիոնը փրկելու գործով։ Քարեր են բերել տալի, որպէսզի ուժեղ և կարող թումբ կառուցանեն ծովի ալիքների դէմ, բայց, շատերի կարծիքով, վտանգն այնքան մեծ է, որ անհնարին են համարում այդ միջոցներով ծովի սպառնալիքները չէզոքացնել։

Ինչպէս յայտնի է, քաղաքիս հիւսիս-արևմտեան մասում ծովից մի հարիւր սաժէն կամ աւելի քայլ հեռաւորութեամբ կայ մի լիճ—Նուրիէ-Գէօլ.—այս լճի ջուրն անալի է, անուշ ջուր է։ Բնիկների ասելով, մի ժամանակ այդտեղ է թափվելիս եղել Ճորոխ գետը և այդտեղից է միացել ծովի հետ։ Մի քանի տարի առաջ կառավարութիւնը ջանքեր գործ դրեց միացնելու այդ լիճը ծովի հետ. աշխատանքը բաւական առաջ գնաց. նոյնիսկ միացրին, յետոյ ծովը նորից խճով լցրեց և նորից բաժանեց լիճը իրանից. կառավարութիւնն էլ թողեց իր ծրագիրը. հիմա ծովն ինքը իրան գալիս է կառավարութեան ծրագիրն կատարելու. շուտով ծովը կառնի իր մէջ այդ լիճն և կը միացնի իր հետը։ Այն ժամանակ քաղաքիս բոլոր հիւսիսային մասը, երևի, կը թաղվի ծովի ալիքների տակ։

Այս ահեղ վտանգի առաջն առնելու համար պէտք է շատ աւելի շուտ ու լուրջ միջոցներ ձեռք առնել, քանի ուշ չէ։

Բաթումցի

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ»

Ամսիս 6-ից «Սոլոլակի դօր դօրում» բացված է «Երաժշտական աշխարհ» ցուցահանդէսը։ Տեղիս հասարակութիւնն ամեն օր անընդհատ բազմութեամբ յաճախում է այդ միակ իր տեսակի, առաջին անգամ Ռուսաստանում երաժշտական ցուցահանդէսը։ Ցուցահանդէսը կազմված է շատ հետաքրքրական. ցոյց են տրված ամեն տեսակ երաժշտական գործիքներ. թէ հին և թէ նոր աշխարհի ամեն տեսակ գործիքները կամ թէ ժամանակակից գործիքների նախահայրերը և թէ վերջերս ամենակատարելագործված նրանց ժառանգները դուք կը տեսնէք ցուցահանդէսում։ Բացի գործիքներից, ցոյց են տրված նաև հին ձեռագրեր յայտնի երաժշտագէտների, ինչպէս, օրինակ, Լիստի, Րուբէնշտէյնի, Գլինկայի, և այլն. կան նաև օտարազգի ձայնանիշների տեսակները, ի միջի այլոց նաև մեր հին եկեղեցական ձայնանիշները, խազերը։

Ցուցահանդէսի ազգագրական բաժնում ի ցոյց են դրված «Արևելեան օրկեստրը» առեղծող և կազմակերպող Ն. Բաղդասարեանի լուսանկարը իր երկու խմբերով՝ Բաքուի և Շուշու։ Երբ ես նայում էի ռուսական ժողովրդական գործիքներից օրկեստր կազմակերպող պ. Անդրէևի խմբերին, ակամայից յիշեցի անցեալը. պ. Անդրէևը մի շատ համեստ երաժիշտ էր մինչև ժողովրդական օրկեստրի կազմելը, համեստ էր նաև նրա նիւթականը, իսկ այժմ՝ անգին կարողութեան տէր է, և, այդ բաւական չէ, նա այժմս տարեկան 8,000 ր. է ստանում Ն. Կ. Մեծութիւնից իբրև խրախուսանք, որպէսզի նա քաջալերված տարածէ ռուսական ժողովրդական երաժշտութեան պրոպագանդը։ Բայց ինչ արինք մենք Բաղդասարեանցին, ո՞վ խրախուսեց նրա սկսած գործը... Եթէ չեմ սխալվում, ծափահարեցինք... և միայն ծափահարեցինք.. Յիշում եմ 1902 թ. Բաքուի Թաղիևի թատրոնում նրա առաջին համերգը։ Ինչ արժեն այդ օվացիաները... այն ծափահարութիւնները.. ոչինչ։ Մենք միայն ծափահարել գիտենք։

Ցուցահանդէսում երեկոները լինում են սիմֆոնիական համերգներ, մասնակցութեամբ կայսերական թատրոնի արտիստների։ Մուտքը մեր կարծիքով թանկ է նշանակված (50 կ.), իսկ երեկոները համերգի ժամանակ 80 կոպէկից սկսած, այնպէս որ հասարակ դասակարգը և ուսանողութեան մեծ մասը դժուար կարողանան օգտվել։ Ցուցահանդէսը ընդհանուր առմամբ շատ հետաքրքրական է և լաւ տպաւորութիւն է թողնում։ Աւելի հետաքրքրական կը լինէր, մեր կարծիքով, եթէ կազմակերպվէին նաև ազգագրական համերգներ. այն ժամանակ հետաքրքրութիւնը կրկնակի կը լինէր։ Աջողութիւն առաջին «Երաժշտական ցուցահանդէսին» Ռուսաստանում, առ մեր ցանկութիւնը։

Ա. Բաղդասարեան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

դեկտեմբերի 28-ին

Վրաց եկեղեցու անկախութեան համար կազմված ժողովները տխուր հետևանքներ ունեցան. եկաւ և Կիրիոն եպիսկոպոսը. սկզբում շատ յարձակողական էր նա, բայց յետոյ կամաց կամաց տեղի տուեց. վերջին ժողովներին արդէն իրանք վրացի ներկայացուցիչները զանազան պատրուակներով հրաժարվեցին ժողովի գնալ. մեծ մասը՝ հիւանդ ձևացան. այդ բոլորից յետոյ ժողովը դատեց, որ ոչ մի պատմական փաստ չը կայ անկախութիւն տալու վրաց եկեղեցուն, մանաւանդ որ ինքը՝ վրացի ժողովուրդն այդ չէ ուզում, այլ մի քանի անհատների գործ է։ Այնուհետև նշանաւոր Վօստորգով քահանան, որ բոլոր ժողովներին մասնակցում էր, իբրև շատ հեղինակ անձն, ներկայացնում է համապատասխան բովանդակութեամբ տեղեկագիր Կայսրին, և դրանով հարցը փակվում է։

Վրացի ներկայացուցիչներից ամեն մէկը, զգալով որ ոչինչ չեն կարող ստանալ, աշխատում էր իրան չէզոք ցոյց տալ կամ հեռու պահել. սա պատմական մի անգին ակտ կը լինի վրաց ժողովրդի համար, որ նա ներկայ դարում չը կարողացաւ իր եկեղեցական անկախութիւնը ջատագովել՝ շնորհիւ իր պաշտօնեաների։ Պ. Մառի տեղեկագիրը այդ առիթով շուտով կը տպագրվի, և ձեզ մի օրինակ կուղարկեմ, որից կը տեսնէք, որ պ. Մառը ոչինչ չէ խնայել ցոյց տալու պատմականօրէն վրաց եկեղեցու անկախութեան գործը. բայց ինչ արած, որ պ. Մառը հրաւիրվել էր միայն տեղեկութիւն տալու, առանց խորհրդակցական ձայնի, իսկ վրաց եպիսկոպոսները զուրկ են եղել մտաւոր պաշարից։

Երէկ վաղ առաւօտեան իր բնակարանի առաջի փոքրիկ այգում զբօսնելու ժամանակ սպանվեց զինուորական դատախազ գեներ. Պաւլովը. դա պատահական սպանութիւն չէ։

ոստիկանութեանը յայտնել են նամակով մի քանի տասնեակ բարձրաստիճան անձանց տերորի ենթարկելու մասին. քաղաքի զանազան մասերում, մանաւանդ երկաթուղիների կայարաններում և հիւրանոցներում, անընդհատ ձերբակալում են իսկական յեղափոխականներին. մի քանի օր առաջ Դրանդ Օտելում մի երիտասարդ մեծ քանակութեամբ Թղթեր այրելուց յետոյ սկսում է ատրճանակ խփել դէպի դուռը, որի ետևին է լինում ծառայողը. գալիս է ոստիկանութիւնը երիտասարդը սկսում է նրան խփել ոլովում է երկար փոխադարձ հրացանաձգութիւն. կանչում են հրդեհաշէջ խումբը և աշխատում են կենդանի բռնել. չէ աջողվում, և նա իրան սպանում է. հաւանական է, որ դա էլ տերորիստներից լինի. այսօր Ֆինլանդիայի կայարանում ձերբակալել են դարձեալ են դարձեալ մի յեղափոխականի ատրճանակով. նոյն կայարանում գրաւել են մեծ քանակութեամբ որսի Թռչուններ, որոնց մէջ զետեղած են եղել ռումբեր: Սկսվել է սարսափելի խուզարկութիւն. ամենահասարակ Թղթի կտորի համար՝ աքսորի են դատապարտում. ամեն օր հարիւրաւոր մարդիկ են ձերբակալվում և մեծ մասամբ աքսորվում. այսպիսի հանդամանքում հաւանական են համարում, որ բարձրադոյն դպրոցները մայրաքաղաքներում կը փակվեն մինչև միւս սեպտեմբեր:

Հ. Ադոնցը հնագիտական ընկերութեան շրջանում կարդացել է իր մի չարադրութիւնը «Բիւզանդական կայսրութիւնը և հայերը» վերնագրով. որ մեծ հաւանութիւն է գտել, ընդդիմախօսներ չեն եղել, բացի մէկից, որը ցոյց է տուել նաև մի ուրիշ աղբիւր, որից պ. Ադոնցը օգտված չէ եղել. սպասվում է, որ եկող տարին պ. Ադոնցը քննութիւն կը տայ և պրիվատ-դոցենտ կը նշանակվի համալսարանում. չարադրութիւնը արդէն պատրաստ է:

Ասլան Շահնազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 26-ին

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկ. վարչութիւնը ստացել է չքաւորների և աղէտներից վնասվածների օգտին 1) տիկ. Վարիա Խանազադեանից 30 կտոր զանազան հին և նոր շորեղէններ երեխաների համար և 3 ր., 2) մի տիկնօջից ընկ. ճաշարանում ճաշող մի աշակերտուհու ճաշի համար ամսական 3 ր., 3) մի պարոնից տասնմէկ աշակերտների ճաշի համար 63 ր. և 4) տիկ. Զարուհի Սաղաթելեանից ընկ. որբանոցի սանուհիներին—տօների համար 25 րուբլի:

Վարչութիւնս պարտք է համարում իր խորին շնորհակալութիւնը յայտնել բոլոր նուիրատուներին:

Նախագահ վարչութեան Ս. Յարութիւնեանց
Անդամ-քարտուղար՝ Ա. Աթանասեանց

—

Թիֆլիս, 2 յունվարի

«Մշակ» լրագրի № 280-ում զետեղված էր մի Թղթակցութիւն Ախալցխայից, որի մէջ մեր խանութի մասին ասված էր՝ իբր Թէ կենտրոնական գրավաճառանոցը Ախալցխայի ուսումնարանների պատուէրը ժամանակին չէ կատարել: Նամակագիրը մեղանչում է ճշմարտութեան դէմ: Նախ Ախալցխայի ուսումնարանների ոչ տեսչից և ոչ հոգաբարձութիւնից գրավաճառանոցը պատուէր չէ ընդունած: Երկրորդ՝ պ. տեսուչը մի հեռագրով դիմել էր պ. Դ. Աղայեանցին և պահանջել նրա գրքերից: Այդ հեռագիրը մեզ յանձնելով պ. Աղայեանցը պատուէրից ուղարկել եղած գրքերը, իսկ պակասող Ուսումն մայրենի լեզուի երկ. տարին, որ այդ միջոցին նորից էր տպագրվում, երբ լոյս կը տեսնի: Ճշտութեամբ կատարելով մեր ստացած պատուէրը հաղորդեցինք և պակասող գրքի չուղարկելու պատճառը, և երբ նոյեմբերի վերջը տպագրութիւնը աւարտվեց, անմիջապէս ուղարկեցինք պահանջած քանակութիւնը: Սա է իրողութիւնը: Անհամեստութիւն չը համարվի մի դիտողութիւն: Եթէ պահանջած գրքերի մի մասը ուշացել էր, պէտք չէր երկու ամիս պահելուց յետոյ ուղարկել. կարելի էր մի քանի օրից յետոյ, որպէս զի ուրիշ ցանկացողներին կարելի լինէր բաւարարութիւն տալ և այդքան ուշացնելուց յետոյ աւելորդը յետ դարձնելով պէտք էր վաճառվածների արժէքը ևս ուղարկել:

Ստեփան Տէր-Իսրայէլեան

—

Թիֆլիս, յունվարի 3-ին

Խնդրում եմ Թոյլ տալ ձեր Թերթում այս երկտողով պարզելու խեղաԹիւրված այն ճշմարտութիւնը, որ «Մնաթոբի» Թերթի №1 համարում էր տպագրված մեր դէմ. իբր Թէ մենք, քարվանսարայի վաճառականներս, Արտէմ Նասիբովի խորհրդակցութեամբ կազմել ենք ժողով միջոցներ մշակելու պաշտպանելու մեր շահերը և դիրքը, ուստի բարոյական պարտքս եմ համարում յայտնելու ի գիտութիւն հասարակութեան հետևեալ ճշտութիւնը: Մենք, քարվանսարայի վաճառականներս, աչքի առաջ ունենալով որ Թիֆլիսի միւս բոլոր վաճառականները կազմել են միութիւն և պահանջում են մեզ էլ միանալ իրանց հետ, ուստի մենք ունէինք լոկ մտադրութիւն հաւաքվելու և խորհրդակցելու այդ հարցի մասին, այն է՝ միանա՞լ Թէ՞ չէ նրանց հետ, քանի որ մենք մեզ համար պարտք են համարում աջակցելու այդ ձեռնարկութեանը: Ինչ վերաբերում է ինձ, ինչպէս վաճառական, պէտք է որ անպատճառ մասնակցէի և աջակցէի այդ գործին, սամանաւանդ որ ինձ գործի նպատակը շատ պարզ էր. ոչ Թէ այնպէս, ինչպէս «Մնաթոբի» Թերթն էր հասկացել: Բայց ցաւոք սրտի պէտք է յայտնեմ, որ ես ներելի պատճառներից ստիպված չը կարողացայ ներկայ գտնվել այդ հաւաքումին, որը ինչպէս իմացայ, չէր կայացել:

Խնդրում ենք միւս լրագիրներին արտատպել:

Ս. Տէր-Յովհաննիսեան

—

Թիֆլիս, յունվարի 4-ին

Նպաստամատոյց Յանձնաժողովը ստացել է 1) Տէր Աստուրեանի ժառանգների սղոցարանի ծառայողներից հայ գիւղական սովեալների օգտին՝ հոկտեմբերի ամսավճարը 26 ր. 50 կ., նոյեմբերի ամսավճարը 21 ր. 50 կ.: 2) Հանգուցեալ Սաղաթելեանի այրուց՝ չուաչեցիների օգտին 75 ր., Նախիջևանցիների օգտին 50 ր., Որբանոցի օգտին 50 ր.: 3) Աւետիս Վարդապետեանից՝ նոյեմբերի և դեկտեմբերի վճարները 10 ր.: 4) «Մուրճ» ամսագրի խմբագրութիւնից 137 ր. 75 կ.: 5) Բաստոնից Ազովեան բանկի մի չէկով 144 ր. 25 կ.: 6) Հաշտարխանի կոնսիստորիայից պօստով 20 ր.: Ընդամենը 535 րուբլի

Ա. Մելիք-Ազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» հետևեալ համարը լոյս պէտք է տեսնէ երեքշաբԹի, յունվարի 9-ին:

—

Կոտկում գիւղացի Արսէն Բաբայեանը մէկ օրինակ «Մշակ» 1907 Թ. նուիրել է Գորիսի հայոց եկեղեցական ծխական դպրոցին:

—

Բագուից, Ղուբայից, Շամախուց և այլ տեղերից հայ ազգաբնակութիւնը ցաւակցական հեռագիրներ է ուղարկում Պարսկաստան Շահի մահվան առիԹով: Ի միջի այլոց նոյն բովանդակութեան հեռագիր ուղարկել են Բալախանիի նաւթային արդիւնաբերութեան բանուորները:

—

Լսում ենք, որ յունվարի 11-ին Հայոց Ազգագրական Ընկերութեան օգտին կայանալու է Արտիստիկական ընկերութեան Թատրոնում մի ներկայացում: Խաղալու են «Համլէտ»: Ի նկատի առնելով Հայոց Ազգագրական Ընկերութեան նպատակը՝ ցանկալի էր, որ հասարակութիւնը համակրանքով վերաբերվէր:

—

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը իրաւունք է տուել Թիֆլիսի բոլոր բժիշկներին (որոնք գործում են) աղքատ հիւանդների համար՝ որ գեղատնից էլ որ լինի՝ ստանալ րգացաւի բժշկութեան պարագաներ, քաղաքի հաշուին: Քաղաքային ինքնավարութեան այդ վճռի մասին, քաղաքային բժշկա-առողջապահական տեսուչ բժ. Ստեփանեանը յայտնել է բժիշկներին և դեղատներին:

—

Դերասան Պետրոսեանի ընտանիքի օգտին ստացանք Ա. Վարդապետեանից 3 րուբլի:

—

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը միջնորդութիւն է յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ, քաղաքի սեփականութիւն դարձնելու Դաւիթի և Սօլօլակի սարերի «փէշերը», որոնց տարածութիւնը 54 դեսեատին է հասնում: Այդ «դօշերի» վրա քաղաքը մտադիր է փողոցներ կառուցել:

—

Անցեալ տարի քաղաքային ջրանցքից մուտք է ստացվել ընդամենը 324,465 րուբլի 48 կոպ. չը հաշուելով զինուորական վարչութեան վրա 50 հազար ր. պարտքը, այսինքն 100 հազարով աւելի նախանցեալ տարվանից:

—

Վերջապէս Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածնի եկեղեցու ծխական համայնքին աջողվեց ընտրել երէցփոխ: Մի քանի չը կայացած ժողովներից յետոյ, կիրակի, դեկտեմբերի 31-ին, տեղի ունեցաւ ծխական ժողով, որը միաձայն ընտրեց երէցփոխ երիտասարդ ինժեներ Վարդան Տէր-Յովհաննիսեանին: Ընտրողները մեծ յոյս ունեն, որ երէցփոխին կաջողվի աւարտել եկեղեցու և նրան կից շինութիւնների նորոգութիւնները և մտցնել կարգ-կանոն եկեղեցու հասոյթների վերաբերմամբ:

—

Թիֆլ. նահանգապետը հաստատել է Կովկասի Փելդշերների և Փելդշերուհիների փոխադարձ օգնութիւն հասցնող ընկերութեան» կանոնադրութիւնը: Յիշեալ ընկերութիւնը նպատակ ունի բարելաւել իր նիւթական դրութիւնը և պաշտպանել արհեստակցական շահերը և փոխադարձ օգնութիւն հասցնել: Այդ նպատակին հասնելու համար, ընկերութիւնը իր իսկական անդամների համար ա) աշխատում է պաշտօն և պարապմունք գտնելու, բ) բաց է Թողնում փոխատուութիւններ և տալիս նպաստներ, գ) օգնութիւն է հասցնում հիւանդ անդամներին և նրանց ընտանիքներին, դ) նպաստում է իսկական անդամների զաւակների և աւելաս արակ ընտանիքների անդամների կրթութեան գործին, ե) ըստ չափուհնարաւորութեան կառուցում է արժան բնակարաններ՝ այն անդամների համար, որոնք առանց տեղի են և ժամանակաւորապէս օգտվում են գիշերային ապաստարաններից. զ) ունի սեփական գրադարան և փելդշերական գրասենեակ, է) հասցնում է իրաւաբանական օգնութիւն, կազմում է սերտողական դասընթացքներ (повторительные курсы) դրոյցներ, ը) ունի սեփական օրաթերթ: Ընկերութիւնը բաղկանում է իսկական պատուաւոր և համակրող անդամներից: Իսկական, անդամներ կարող են լինել փելդշերներ և փելդշերուհիներ, Կովկասի բոլոր տեղերից, որոնք քննութիւն են բռնել բժշկական վարչութիւններում և որոնք 50 տարեկանից մեծ չեն: Ընկերութեան միջոցը բաժանվում է պահեստի և գործածելի դրամագլուխների (10 %-ը պահեստի, 90 %-ը գործավարութեան մէջ). ընկերութեան գործերը վարում են ա) ընդհանուր ժողովը և բ) ընկերութեան վարչութիւնը: Անդամավճարը տարեկան 6 րուբլի է:

—

Ատրպատականի կառավարութիւնը, գահաժառանգի Թեհրան մեկնելու պատճառով, անձնված է պրինց Իմամ-Կուլի-Միրզային:

—

Թաւրիզից գրում են «Закавказіе» լրագրին. «Թաւրիզի յայտնի մուշտէիդ Հաջի-Միր Հասան Աղան, որ վերջերս իր ցրեոնի չահմարանները յօժարակամ դրեց ժողովրդի ներկայացուցիչների տրամադրութեան տակ, մօտ օրերս, հրաւիրելով իր մօտ վերջիննեին, յանձնել է նրանց և իր բոլոր կալուածքների ցուցակը: Մուշտէիդի լիազօրութեամբ, յիշեալ կալուածքները Թողնւած են ժողովրդական ներկայացուցիչների տնօրէնութեան ներքոյ, որոնք կալուածքներից ստացված զուտ մԹերքները ամբողջովին պէտք է վաճառեն ժողովրդին արժան գներով:

—

Թաւրիզում գոյութիւն ունեցող «Իդդիհատ» բարեգործական ընկերութիւնը մօտ օրերս Թաւրիզում բանում է մի մեծ ձրի հիւանդանոց՝ յատուկ աղքատ հիւանդների համար:

—

Արտիստական ընկերութիւնը մտադիր է յունվարի 31-ին գիշեր դահլիճը պօլիտեխնիկում կառուցանելու համար պարահանդէս տալով մասնաժողովին:

—

Յունվարի 3-ից լոյս է տեսնում «Тифлисскій Листокъ» լրագիրը Ի. Խաչատուրովի խմբագրութեամբ: Ինչպէս յայտնի է, այս Թերթը անցեալ տարվայ վերջերը դադարեցված էր:

—

Թիֆլիսում գոյութիւն ունեցող «Трудъ» տպարանի տէրը, անցնաԹուղԹ չունեցողների տպարանում գիշերելու համար, գեներալ-նահանգապետից 300 րուբլի տուգանքի է ենթարկվել. սակայն անկարող լինելով վճարել յիշեալ գումարը, նա բանտարկվելու է 3 ամսով և ապա աքսորվելու Աստրախանի նահանգը, ուր ապրելու է 5 տարի շարունակ:

—

Յունվարի 7-ին, ցերեկվայ ժամը 12-ին, քաղաքային վարչութիւնը դիտելու է Արամեանցի անունով հիմնված նոր հիւանդանոցը: Հրաւիրված են նաև բոլոր ձայնաւորները: Հիւանդանոցի բացումը տեղի կունենայ երկու ամսից յետոյ:

—

Ստացանք չքաւորներին բաժանելու համար տիկ. Սոնա Սարգսեանից 3 րուբլի:

—

Յունվարի 3-ին բացվել է Զուդուրէթի Ս. Աստուածածին եկեղեցու ծխական դպրոցը:

—

Պօլիտեխնիկում հիմնող մասնաժողովը պօլիտեխնիկումի օգտին ամեն օր ստանում է 100—200 րուբլի Թէ քաղաքից և Թէ գաւառներից:

—

Բեռլինից հաղորդում են, որ վերջին ժամանակներս նկատվում է ոսկու մեծ պակասութիւն: Այդ առիթով նոյնիսկ խոշոր բանկերը տալիս են գրաւ դրված իւրերին 5 տոկոս իսկ մուրհակազեղչը (դիսկօնտ) հասնում է մինչև 8 տոկոս: Այդպիսի հազուագիւտ երևոյթը, որպիսին չէ նկատվել վերջին 30 տարվայ ընթացքում, ցոյց է տալիս, որ արդիւնաբերութիւնը արագ զարգանում է:

—

«Новая Газета»-ն արժանահաւատ աղբիւրներից լսել է, որ Պետերբուրգում վերջերս եղած բուխարական էմիրի ընդունելութեան և ճաշապարհ գնելու համար ֆինանսների մինիստրութիւնը յատուկ գումարներից 60000 ր. է յատկացրած եղել գեներալ շտաբին կից ասիական բաժնի կառավարչի տրամադրութեան ներքոյ:

—

Դեկտեմբերի 17-ից մինչև 24-ը պատերազմա-դաշտային դատարանի վճռով մահվան պատիժ են կրել ընդամենը 41 մարդ, խոշոր կողոպուտներ են եղել 200,000 րուբլի գումարի, տեղի են ունեցել մօտ 51 քաղաքական սպանութիւններ, փակվել են 12 լրագիրներ զանազան տեղերում: Համայն Ռուսաստանում շարունակվել են մի շարք խուզարկութիւններ, ձերբակալութիւններ և էքսպրոպրիացիաններ:

—

«Русь»-ը հաղորդում է որ Պօբեդոնոսցեվը Թոքերի բորբոքում է ստացել: Նրա դրութիւնը լուրջ է: («Н. Б.»)

—

Լուրերին նայած, պետական կօնտրօլեօր Շվանէնբախը Թողնում է իր պաշտօնը: («К. Р.»)

—

Տեղեկութիւններ են ստացված, որ Սմօլէնսկի աքսորաբանտում, ուր կան մօտ 400 քաղաքական յանցաւորներ (Սվէաբորգի և Կրօնշտադի նաւաստիներ և այլն) յուզմունքներ են սկսվել: Անբաւական իրանց տրված կոշտ սպիտակեղէնից, աքսորականները Թոյլտուութիւն են խնդրում գործածել իրանց սպիտակեղէնը: Նրանց մերժում են: Իբրև բողոք, նրանք հանում են իրանց վրաներից շորերը և սպիտակեղէնները, շպրտում են անկողինները և ահա մի քանի օր է արդէն, բոլորովին մերկ են շրջում, սվվալով ու կոնկոնծնալով ցրտից: («Вѣкъ»)

—

Սիմբիրսկի անուանի ազնուականներից մի քանիսը, զայրացած այն բանից որ ազնուականութեան միջից արտաքսել են Պետական Դումայի նախկին անդամներ Մեանիկովին և ուրիշներին, բողոք են ներկայացրել ազնուականների պարագլխին և յայտնել, որ այդ հանգամանքի շնորհիվ իրանք իրանց համար անպատուաբեր են համարում մնալ Սիմբիրսկի ազնուականութեան շրջաններում, և խնդրում են իրանց ևս հանել ազնուականութեան ցուցակներից: («Рѣчь»)

—

Պետերբուրգում լուր էր տարածվել, որ քաղաքապետ ֆօն-դեր-Լաունիցին սպանողը պատկանում է Պետերբուրգի բարձր շրջաններին: Նոյն իսկ ասում էին, որ նա մի ինչ որ յայտնի դիրք ունեցող գվարդէյսկի գեներալի որդի է: Սակայն «Мол. Жизнь» լրագրի ասելով, այդ լուրը մինչև այժմ չէ ստուգված:

—

Կրօնշտադի զինուորական նահանգապետը յայտարարել է ի գիտութիւն ամենքի, որ ոչ միայն հիմնարկութիւնները, այլ և քաղաքի բոլոր բնակիչները ոստիկանութեան պահանջի համաձայն պէտք է աջակցեն բռնելու յանցաւորներին և կասկածաւոր անձանց: Հակառակ դէպքում այդ հրամանը չը կատարողները ենթարկվելու են 3,000 րուբլի տուգանքի կամ երեք ամսվայ բանտարկութեան: («Мол. Жизнь»)

—

Դեկտեմբերի 23-ին Կազանից հեռագրում են «Рѣчь» լրագրին, որ Զիստոպոլում Պետական Դումայի նախկին պատգամաւոր Բադամշինի և Ամիրխանով մօլլայի կալանաւորութիւնը մեծ յուզմունք է առաջացրել ԹաԹար հասարակութեան մէջ. չափազանց դրվում են այդ դէպքի համար: Արդէն 50 ից աւելի ազդեցիկ Թաթար ընտանիքներ ցանկութիւն են յայտնել բանտարկվածներին երաշխաւորութեամբ ազատելու: Առաջադիմական տարրերի դէմ յարուցված հալածանքներն ու անախորժութիւնները մահմեդականներին կողմից խիստ պախարակութեան և քննադատութիւնների են հանդիպում:

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ այն 15 միլիօն րուբլին, որը իր ժամանակին յատկացրել էին անբերրիութիւնից վնասված գիւղացիներին սերմացուի համար, և այն 55 միլիօն րուբլին, որ յատկացրել էին նրանց հաց մատակարարելու համար, ընդամենը 70 միլիօն րուբլի, համարեա Թէ բոլորը ծախսված է արդէն: Այդ պատճառով ներքին գործերի մինիստրը առաջադրութիւն է արել մինիստրների խորհրդին պետական գանձարանի միջոցներից յատկացնել, գործը շարունակելու համար, 71 միլիօն րուբլի, որովհետև կարօտութիւնը շատ մեծ է:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են դեկտեմ. 25-ից: Ինչպէս լսում ենք, Երևանի Թեմական դպրոցի նոր հոգաբարձութիւնը հներից դպրոցի գործերը ստանալիս գտել է դրամական մի քանի Թերութիւններ, որոնք վերաբերում են հանգուցեալ Թայիրեանցի կտակած գումարին և անցեալ հոգաբարձութեան հաշիւներին: Դրանց լուսաբանելու համար ուղարկվում են Թիֆլիս հոգաբարձութեան որոշմամբ հոգաբարձուներ պ. պ. Սիրական Տէր-Մարտիրոսեանց և Պօղոս Կանդըրալեանցը, որոնք պէտք է նոյն տեղի բանկերից տեղեկութիւններ հաւաքեն ու գալով զեկուցանեն հոգաբարձութեան ժողովին: Ինչպէս լսում ենք, Թերութիւնները հազարներ են հասնում, մանաւանդ Թայիրեանցի կտակից: Մանրամասնութիւնները իր ժամանակին կը տանք: Եղանակները մեզանում անցնում են պայծառ և չորային. երևի հէնց այդ է պատճառը, որ քաղաքումս տարածված է սկառլատինա և ինֆլենցա հիւանդութիւնները: Բայց շնորհիւ տեղական բժիշկների, մահվան դէպքեր շատ քիչ է լինում»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յունվարի 3 ին

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունվարի: 1-ին կարգի տիրաժով տարված խաղարկու տոմսակները. 200000 րուբլի—սէրիա 19520, տոմսակ 15, 75000 րուբլի—17624/41, 40000 րուբլի—4890/22, 25000 ր.—799/37, 10000-ական րուբլի—7579/19, 8245/9, 18449/32, 8000-ական ր.—15032/8, 15486/41, 11946/2, 902/23, 10363/49, 5000-ական ր.—10424/17, 12718/29, 18743/14, 14700/22, 13815/13, 14161/35, 5731/27, 8344/35, հազարական րուբլի—10680/11 16101/23, 14061/32, 301/27, 14165/11, 3938/20, 5586/17, 8243/37, 16695/6, 4847/1, 7814/1, 5462/15, 1660/5, 15709/13, 3413/32, 8073/32, 11738/36, 12979/47, 15133/1, 13254/21.

Կ. ՊՕԼԻՍ, 2 յունվ.: Կոնիայ վալի Ֆէյկ-Բէյը նշանակված է Սմիրնայի վալի, նախկին մեծ վէզիր Քեամիլ փաշայի փոխարէն: Վերջինս աքսորված էր Ռոտոս կղզին: Երէկ նա փախաւ բանտից և Թագնվեց անգլիական տեղական հիւպատոսարանում: Այսօր նա հեռացաւ հիւպատոսարանից, սուլթանից երաշխաւորութիւն ստանալով որ անարգելք կը վերադառնայ Կ. Պօլիս: Քեամիլ-փաշայի դրութիւնը դեռ շատ առաջ երերուն դրութեան մէջ էր Սմիրնի վիլայէթում ցոյց տուած գործունէութեան առաւելապէս նրա որդի՝ ծովապետ Սաիդ-փաշայի վարմունքի պատճառով, որը իրան վարկաբեկ արեց աւազակախմբերի հետ յարաբերութիւն պահպանելով:

ՍԻՄԲԻՐՍԿ, 2 յունվ.: Պետական Դումայի նախկին անդամ Ալադինի անունը հանված է ընտրողների ցուցակից:

ՏՎԷՐ, 2 յունվ.: Հոկտ. 17-ի դաշնակցութեան տեղական բաժինը եզրակացրել է, որ աննար է բլոկ կազմել կադէտների հետ:

4 յունվարի

ՊԱՐԻԶ, 2 յունվարի: Սենատում, արտաքին գործերի նախահաշիւը քննելու ժամանակ, զեկուցանող Դիւպիւին, պարզաբանելով 1906 Թւում եղած դիպլօմատիական յարաբերութիւնները, բաւականութիւն է յայտնում Անգլիայի հետ դաշնադրութիւն կապելու առիթով, որը, նրա խօսքերով, երկու պետութիւնների սրտագին համաձայնութեան բախտաւոր հետևանք է հանդիսանում: Յիշելով Մակեդօնիայի մասին, հռետորն ասում է, որ միջազգային ժանդարմէրիան հաւանօրէն երկրում դեռ ևս երկար կը գործէ: Անցնելով Մարօքկօյին, Դիւպիւին ասում է. «Տեսնելով ֆրանս-սպանիական էսկադրան Տանժէրում, սուլթանը վճռեց կարգը վերականգնել. յուսանք, որ սուլթանի այդ մտադրութիւնը հաստատ է. Ֆրանսիան կարող է իր կոչումը միշտ պահել, գործելով բաց աչքերով, զգոյշ և խելացութեամբ»: Զինման հարցի վերաբերմամբ զեկուցանողը ասում է. «Ափսոսում եմ ես, արդարև, երբ տեսնում եմ, Թէ ինչպէս պետութիւնները ջանում են ապահովել իրանց դրութիւնը. օրինակ Անգլիան, որի մասին ասում էին, որ նա կրճատել է իր ծովային-զինուորական նախահաշիւը, բայց և այնպէս նա ետանդով հոգում է իր ազգային ինքնապաշտպանութեան մասին»: Ապա Դիւպիւին յայտնում է, որ այնքան էլ վատ չէ Հաագայի պաշտօնավարութեան գործունէութեանը. պէտք է աջակցել երկրի պաշտպանողական բարոյական և նիւթական միջոցների ամրապնդման, ձեռնպահ մնալ դաշնակցութիւնների և համաձայնութիւնների քաղաքականութիւնից, չը խառնվել ուրիշի գործերում: Վիճաբանութիւններից յետոյ՝ սենատը ընդունում է արտաքին գործերի մինիստրութեան նախահաշիւը:

ԼՈՆԴՈՆ, 3 յունվարի: Վճռված է բռնել Տիբէտի քաղաքներից մի քանիսը օտարազգի առևտրի համար:

ՏՕԿԻՕ, 3 յունվ.: (Սեփական Թղթակցից) Դրական մտքով է վճռված ճապօնական զինուորական իշխանութիւնների գրաւած տները բնակիչներին վերադարձնելու հարցը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվ.: Շքանշաններ են շնորհված շատ բարձրաստիճան պաշտօնեաներին: Բրէֆական գերագոյն դատարանի անդամներ են նշանակվում. նախագահ՝ Պետական Խորհրդի անդամ Շամշին, անդամներ՝ Բրասկի, Մէշչանինով. Ֆինէնկօ, Լիւցէ, Սիմէնով սենատօրները: 1907 Թւի համար Պետական Խորհրդի մշտական անդամներ են նշանակվում. գեներալ Ռէնէնկամպֆ, Դիկօվ, Դուբասօվ ծովապետները, ինժեներէ գեներալ Վէրնանդէր. գեներալ-լէյտենանտ Պրօտօպօպով և Կրօնշտադի զինուորական նահանգապետ Իվանօվը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվարի: Զինուորական մինիստրը խնդրամատոյց է եղել մինիստրների խորհրդին, անկախ 1906 Թւի որոշված նախահաշուից, յատկացնել 1,379,930 րուբլի՝ հին զինուորների և կօզակների պէտքերի համար:

ՄՕՍԿՎԱ, 3 յունվարի: Քաղաքապետը կարգադրել է, որ նախընտրական ժողովներում ճառեր արտասանեն միայն այն հռետորները, որոնց անձնաւորութիւնը և բնակատեղին յայտնի են ժողովի նախագահին, որովհետև փաստը ցոյց է տուել, որ մի քանի հռետորներ, առաւելապէս ձախակողմեան կուսակցութիւնների ներկայացուցիչները, յաճախ իրանց ազգանունները կեղծում են և երբ նրանց վրա հսկողութիւն է նշանակվում, ապրդում են ոստիկանութեան ուշադրութիւնից:

ՎԱՐՇԱՒԱ, 3 յունվարի: 1906 Թւականի ընթացքում քաղաքումս սպանվել են 20 զինուորներ, 7 ժանդարմներ, 42 ոստիկանական պաշտօնեաներ, ընդամենը 179 մարդ: Ռումբի պայթումի դէպքեր եղել են 10, պայթումից վիրաւորվել են՝ 50 հոգի, սպանվել՝ 8: Կողոպտվել են 149 գինետներ: Ոստիկանութեան կորուստը 3 տարում անում է—սպանված՝ 83, վիրաւորված՝ 124, ընդամենը 207 մարդ:

ՊՕԶՆԱՆ, 3 յուն.: Տեղական զօրաբանակին տրված հրամանով, զինուորներին արգելվում է յաճախել լեհական Թատրոնները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվ.: Վախճանվեց արդարադատութեան մինիստրութեան անդամ «Քաղաքացիական ընդհանուր իրաւունքի» հեղինակ, յայտնի իրաւաբան գ. խ. Կ. Ի. Մալիշէվը:

ՍՄՕԼԷՆՍԿ, 3 յունվ.: Բաժանորդների չգոյութեան պատճառով կադէտների «Нашъ край» Թերթը դադարեցրեց իր գոյութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

Դեկտեմբերի 1-ից
Անյայտացել է իմ միակ որդին,
15 տարեկան
Գիմնազիայի աշակերտ
Նիկօլայը
Խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի պարոններին, որոնք գիտեն նրա տեղը կամ տեսել են պատահմամբ մի տեղ, յայտնել ինձ այս հասցէով.
Գտնողին տալիս եմ 100 րուբլի նուէր
Екатеринодаръ, Борзиковская ул. 63. Александру Ивановичу Айвазову. 1—3

24 ПОЛУТОМА. 1500 иллюстрацій и картъ.
Открыта подписка на новую иллюстрированную энциклопедію, выходящую подъ редакціей извѣстныхъ профессоровъ-спеціалистовъ съ января 1907г. въ видѣ двухнедѣльн. ЖУРНАЛА-СЛОВАРЯ
„НОВАЯ БОЛЬШАЯ ЭНЦИКЛОПЕДІЯ“
въ 24-хъ полутомахъ съ 1.500 иллюстрац., портрет. и картами.
Вся „НОВАЯ БОЛЬШАЯ ЭНЦИКЛОПЕДІЯ“ печатается въ форматѣ БОЛЬШИХЪ энциклопедическихъ словарей, весьма четкимъ шрифтомъ (корпусъ рената) 18 МИЛЛІОНОВЪ БУКВЪ.
Не загромождая нашего изданія лишнимъ балластомъ, мы даемъ общепонятнымъ языкомъ обширный разносторонній матеріалъ по всѣмъ отраслямъ знанія и техники въ независимомъ безпристрастномъ толкованіи.
Подписная цѣна 12 руб. съ пересылкой за все изданіе выпускаемое двухнедѣльными полутомами полностью въ теченіе 1907 года.
Допускается самая широкая разсрочка—по 1 руб. въ мѣсяцъ.
Лица, внесшіе не менѣе 6 руб. при подпискѣ, получатъ всѣ тома въ прочныхъ и красивыхъ переплетахъ.
При помѣсячной разсрочкѣ, лица желающіе получить всѣ тома въ переплетахъ, высылаютъ по 1 р. 20 к.
Простую и денежную корреспонденцію и денежные переводы благоволятъ направлять: Петербургъ, Невскій, 114, въ главную контору журнала-словаря „НОВАЯ БОЛЬШАЯ ЭНЦИКЛОПЕДІЯ“ (при Т-вѣ Сѣверныхъ Книгоиздателей).
1 р. въ мѣсяцъ. 12 р. за все изданіе съ перес.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՕՆԱԾԱՌ
Կիրակի օրը՝ յունվարի 7-ին, Հաւլաբարի Թատրոնում «սովալլուկ ղարաբաղցիների» օգտին հայ և ռուս արտիստ-սիրողների խմբի մասնակցութեամբ կը ներկայացվի I «Синяя Борода» և II «Փաստաբանի մօտ». լինելու է ճոխ տօնածառ, եւրոպական և ասիական պարեր. նոյնպէս հրաւիրված են զինուորական-երաժշտական օրկեստր և սազանդարներ: Տեղերի գները՝ տղամարդկանց համար 1 րուբլի, կանանց—50 կ., երեխաներին—25 կ.: Երեխաների համար 4—8 ժամը:
Սկիզբը երեկոյեան ժամը 4-ին: 1—1

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
ցանկանում է կասսիրշայի, գործակատարուհու կամ կօնտօրշչիկի պաշտօն ունենալ մագազիններում կամ կանցելեարիայում, կամ ընտանիքում դաստիարակչուհի լինել: Հասցէն՝ Сергѣевс., 18, д. Саркисова. 1—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը: Երևանեան հրապարակ, տ. Գուրջէնովի № 7. պօդեզ նօտար Մղերովի:

ԾԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ՀՆԱՐԵԼ Է
ԲՐՕԿԱՐ եւ ԸՆԿ.
ՖԻՐՄԱՆ
ԻՐ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ Է
GRAND PRIX
Բարձրագոյն ընծայ. Պարիզ 1900 թ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.
„ՀՈՍԱՆՔ“
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ.
Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում և գաւառներում տարեկան 6 րուբլի, կէս-տարւանը 3 րուբլի, ամսական 50 կոպէկ:
Յայտարարութիւնների վճարն է առաջին երեսում իւրաքանչիւր տողին պետիտով 6 կոպ. վերջին երեսում 3 կոպէկ: Տարեկան և տևողական յայտարարութիւնները՝ փոխադարձ համաձայնութեամբ:
Արտասահմանում և Պարսկաստանում 20 ֆրանկ. կէս տարին 10 ֆրանկ. ամսական 2 ֆր.:
Խմբագրութեան հասցէն հետևեալն է՝ Тифлисъ Редакціи «Осанкъ» Николаевская № 9 կամ Tiflis (Caucase) Rédaction «Hossank». 3—3

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
ԾՈՅԻ ԵՒ ՊԱՏԻ
1907 Թ.
„ՇԻՐԱԿ“
պատկերազարդ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ պատկերազարդ
ՀԱՄԱՌՕՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԾՈՅԻ ՕՐԱՑՈՅՑԸ բացի օրացուցական բաժնից պարունակում է վաճառականական, օրէնսդրական, բժշկական, տնտեսական, ճանապարհորդական, արհեստագիտական, գիւղատնտեսական, կենսագրական, տոմարագիտական, գիտական, բանաստեղծական—վերածնութեան մեղեդիներ, պատմական—Նաթան Հալ (Ամերիկայի անկախութիւնից), Ազգային ժողով (ֆրանսիական յեղափոխութիւնից), Ռամկավարութիւն, Սահմանադրութիւն, Ի՞նչ է ազգութիւնը, Յեղափոխութիւնների պատմութիւնը, Տաճկահայոց սահմանադրութիւնը, Օգտակար խորհուրդներ, Գիտական Զուարճալիք, Խնդիրներ, Վիճակներ, Րեբուսներ և այլ և այլ հետաքրքիր տեղեկութիւններ:
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑԸ պարունակում է ընտիր մտքեր և աֆորիզմներ, եկեղեցական և ազգային տօների պատմական բացատրութիւններ, հայոց ազգային սովորութիւններ, բժշկական, առողջապահական, Թռչնապահական, մեղուաբուծական, անասնապահական, գիւղատնտեսական տեղեկութիւններ, խորհրդածութիւններ հեղինակաւոր անձանց: Ազգային քնար, վերածնութեան մեղեդիներ, նշանաւոր դէպքեր հայկական նորագոյն կեանքից և հայոց պատմութիւնից: Տնտեսական, արհեստագիտական, խորհուրդներ, հետաքրքիր նորութիւններ, պատմական ժամանակագրութիւններ, նոր անեկդոտներ, առածներ, հանելուկներ, ժողովրդական, յեղափոխական երգեր, լէջներ. արկածալի և հերոսական դէպքեր յեղափոխական աշխարհից, հետաքրքիր տեղեկութիւններ ղուրանի և մահմեդական վարդապետութեան մասին, Հայլն Հայլն:
Իւրաքանչիւր առաջին երեսի վրա կայ մի մի բանաստեղծական հատուած հայ և օտար նշանաւոր բանաստեղծներից, որոնք արտայայտում են նրանց հայեացքը դէպի ազգային և հասարակական խնդիրները:
ՏԱԽՏԱԿԸ մի գեղարուեստական աչքաչիլ նկար է վեց գոյնով, պատրաստած լիտոգրաֆիայում, որ ներկայացնում է «ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ» զարդարված «Հայկական դրօշմներով» (դիրբեր), մի նկար, որ կարող է սենեակի զարդ ծառայել:
«Շիրակ» օրացոյցները զարդարված են գունաւոր պատկերներով:
Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը կարող են ստանալ ձրի:
Գները՝ ծոցինը 20 կ., պատինը 50 կ.: Գումարով գնողներին ծոցինը 15 կ., պատինը 35 կ.:
Ցանկացողները Թող շտապեն, որ պատուէրները կարելի լինի ճշտութեամբ կատարել:
Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ» Карапету Апиняну. Արտասահմանից՝ Alexandropole, Karapet Apinian (Caucase).
14—15 Կարապետ Ափինեան

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5